

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ. «ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՎՈՐԴԻՆ ԴԻՄԱՂՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԵՐԷՆ ՄԷԿՆ ԱԼ ԱՆՈՐ ՄԻՏՔՆ ԷՐ»

Երեքշաբթի, 16 Յունուար 2018-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Արաբ Գրողներու Միութեան ընդհանուր քարտուղարութեան ժողովին մասնակցող պատուիրակուիներու Նախագահները:



Հանդիպման ընթացքին կողմերը գրուցեցին արաբական մշակոյթին ու մտքի զարգացման, արաբական ընկերութիւններէն ներս անոնց դերակատարութեան եւ այդ ընկերութիւններուն դիմագրաւած հարցերուն շուրջ:

Նախագահ Ասատ դիտել տուաւ, որ կարելի չէ արաբական երկիրներուն դիմագրաւած պատերազմներն ու տագնապները ըմբռնել առանց արաբական միտքն ու անոր զարգացումը խոչընդոտող հարցերը հասկնալու:

Ասատ անհրաժեշտ համարեց արաբական միջավայրէն ներս մտային զարգացումը խոչընդոտող երեւոյթներուն դէմ պատուար մը ստեղծել: «Սա արաբ բանինաց խաւէն կը պահանջէ ճկուն, զարգացող մտածելակերպ ու երկխօսութեան մշակոյթ ունենալ՝ արաբական մտքի զարթոնքը երաշխաւորելու ապա նաեւ հանրութեան մտածելակերպին վրայ դրական ազդեցութիւն ունենալու համար», ըսաւ Ասատ:

Նախագահը նկատել տուաւ նաեւ, որ ներկայ սերունդը կ'ուղղուի դէպի ծայրայեղութիւն կամ օտարամոլութիւն: «Ահա ճիշդ այստեղ է, որ կը պահանջուի արաբ մտաւորականութեան դաստիարակիչ դերին վերաշխուժացումը, որովհետեւ ժողովուրդներու դիմադրողականութիւնը Նախ միտքէն կը ծնի, մտային պայքար է՝ յանուն ինքնութեան ու պատկանելիութեան պահպանումի: Սուրիոյ դէմ մղուած պատերազմը Նախ եւ առաջ մտքի ու տեղեկատուութեան պատերազմ էր: Փաստօրէն, Սուրիոյ ժողովուրդին դիմադրողականութեան գործօններէն մէկն ալ անոր միտքն էր», եզրափակեց Ասատ:

## ՍՈՒՐԻԱ ԽՍՏԻ ՊԱՏԱՊԱՐՏԵՅՑ ԱՄՆ-Ի ԿՈՂՄԷ ԵՐԿՐԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՉ ԶԻՆԵԱԼ ԽՄԲԱԿՈՐՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Երկուշաբթի, 15 Յունուար 2018-ին, Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան բանաբերը ՍԱՆՎ-ին յայտնեց, թէ. «Սուրիա խստիւ կը դատապարտէ Սուրիոյ արեւելեան շրջանին մէջ ԱՄՆ-ի կողմէ գինեալ խմբաւորումներու յառաջացումը: Այս արարքը ուղղակի կերպով կը խախտէ Սուրիոյ ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը, աւելին՝ միջազգային օրէնքը»:



Աղբիւրը ըսաւ. «ԱՄՆ-ի այս քայլը իր կործանարար քաղաքականութեան արդիւնքն է՝ տարածաշրջանի պետութիւնները քայքայելու, լարուածութիւնները սրելու եւ առկայ տագնապներուն լուծումները ուշացնելու համար: Այս քաղաքականութիւնը կը ծառայէ սիոնական եւ ամերիկեան ծրագիրներուն՝ ի դէմս արաբական երկիրներուն: Ուստի, Սուրիա կոչ կ'ուղղէ միջազգային հանրութեան ԱՄՆ-ի այս արարքը դատապարտելու եւ վերջ տալու այլ երկիրներուն տիրապետելու անոր մտայնութեան, որ իր կարգին կը սպառնայ միջազգային անվտանգութեան ու խաղաղութեան»:

Աղբիւրին համաձայն. «Սուրիոյ այն քաղաքացիները, որոնք մաս պիտի կազմեն ԱՄՆ-ի հովանաւորած գինեալ խմբաւորումներուն՝ երկրին ու անոր ժողովուրդին դաւաճանները պիտի համարուին, որովհետեւ գինեալ այս խմբաւորումները Սուրիոյ տագնապի քաղաքական լուծման արգելք պիտի հանդիսանան եւ ռազմական գործողութիւնները պիտի հրահրեն: Սուրիա կը հաւատայ, որ իր ժողովուրդը եւ բանակը, որոնք տարիներ շարունակ դիմադրեցին ծայրայեղ ահաբեկչութեան ու ԱՄՆ-ի կործանարար ծրագիրներուն, այսօր եւս ձայնողութեան պիտի մատնեն բոլոր դաւադիր ծրագիրները եւ վերջ պիտի տան Սուրիոյ մէջ ԱՄՆ-ի ներկայութեան»:

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՅԱՏԱՏԱՆԻ Ա. ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԿՈՆԴԱԿԸ

Ազատ ու անկախ ապրելու տեսչը եւ կամքը, նոյնիսկ իմացեալ մահով, հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան ամենէն յատկանշական երեւոյթները դարձած են՝ Հայկ Նահապետէն սկսեալ: Հարուստ է մեր պատմութիւնը բռնակալութեան դէմ հերոսական մարտնչումներով:

Այսպէ՛ս եղաւ 28 Մայիս 1918 թուականը մեր ժամանակակից պատմութեան մէջ, երբ հայ ժողովուրդը, բոլոր ժամանակներու Վարդան Մամիկոնեաններու ու Ղեւոնդ Երեցներու հաւատքով թրծուած եւ վճռակամութեամբ գինուած, վերահաստատեց ինքնուրոյն պետականութեամբ իր հայրենի հողին վրայ ազատօրէն ապրելու իր հաւաքական կամքը: Ըշրորոշիչ նշանակութիւն ունեցող դարձակէտ մըն է Մայիս 28-ը՝ Կիլիկեան Թագաւորութեան անկումէն յետոյ (1375), օտար ուժերու ենթակայ դարձած հայ ժողովուրդի պատմութեան մէջ: Նախախնամական ինչ տնօրինութիւն. երբ



տակաւին քանի մը տարիներ առաջ, Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի կ'ունենար հայոց ցեղասպանութիւնը, Երեւանի մէջ կը բարձրանար հայ ժողովուրդի անկախութեան դրօշը՝ եռագոյնը...:

Դիւրին չեղաւ Մայիս 28-ով խորհրդանշուող Հայաստանի Առաջին Հանրապետութեան հաստատումը: Արդարեւ, Համաշխարհային Առաջին Պատերազմին թողած վերքերը չդարմանուած, Ռուսիոյ մէջ տեղի կ'ունենար Հոկտեմբերեան յեղափոխութիւնը (1917), որուն հետեւանքով ռուսերը կը հեռանան Կովկասէն՝ առանձին ձգելով հայերը Թուրքիոյ դիմաց: Արտաքին ճակատին վրայ, Հայաստանը շրջապատող պայմանները ու շրջանին առնչուած աշխարհաքաղաքական շահերը ի նպաստ մեզի չէին: Ներքին ճակատի վրայ, դիւրաբեկ էր Հայաստանը ու չունէր կազմակերպուած բանակ ու առողջ տնտեսութիւն:

Ահա այս կացութեան մէջ թրջական բանակը կը սկսի շարժիլ Երեւանի ուղղութեամբ: Հայկական փոքր բանակով փաստօրէն դժուար էր պաշտպանել Սեւ ծովէն մինչեւ Վասպուրական երկաթուղի ռազմաճակատը: Հայ ժողովուրդը կը գտնուէր նոր Աւարայրի մը դիմաց: Վճռադրոշմ այս պահուն, Արամ Մանուկեան կը հռչակուի գերագոյն ղեկավար: Մեր ողջ ժողովուրդը, մեծ թէ փոքր, հոգեւորական թէ աշխարհական, մտաւորական թէ շինական, կ'ընդամաքէ Արամի կոչին եւ Ղարաբաղի Սարգարապատի եւ Բաշ Ապարանի մէջ կը կռուի «ազատութիւն կամ մահ» նշանաբանով ոգեգինուած, հայրենիքի անկախութեան համար արիւն թափելու գիտակից յանձնառութեամբ: Երեւանի դռներուն առջեւ տեղի ունեցած այս ճակատագրական ճակատամարտէն յաղթական դուրս եկած հայ ժողովուրդը կը հռչակէ իր հայրենիքի անկախութիւնը:

Պատմական Հայաստանի փոքր հողաշերտին վրայ ծնած Հայաստանի Հանրապետութիւնը կը դիմագրաւէ լուրջ տագնապներ. ամենուրեք գաղթականներ ու որբեր, սով ու համաճարակ եւ ո՛չ մէկ արտաքին օգնութիւն: Հակառակ նորանկախ Հայաստանը շրջապատող ներքին ու արտաքին ահաւոր դժուարութիւններուն, երկիրը աստիճանաբար կ'ունենայ իր խորհրդանշանը, կառավարութիւնը, դատական իշխանութիւնը եւ բանակը. կը ճշդը-

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
 Տուաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս  
 Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
 Որ յԱնթիլիաս, Լիբանան  
 Ի 1-ն Յունուարի, 2018 թուին Ըրիստոսի, եւ  
 Ի թուին Հայոց ՎՆԿԷ  
 Ընդ համարաւ ՎՆԿԷ  
 Շար.՝ Էջ 4

### Խմբագրական

## Անպահովություն 100-ամեակին Առիթով

Հայաստանի անկախության 100-ամեակը որոշակի պատասխանատուության մը դիմաց կը դնէ գաղութի միութեան եւ կրթական պատասխանատուները: Պատասխանատուութիւն՝ յոբելինական այս տարին լիարժէքօրէն յիշատակելու ու ձեւական տօնակատարութիւններէն քայլ մը անդին անցնելով զայն ուղենիշի վերածելու:

Անկախութեան խորհուրդը նորահաս սերունդներուն փոխանցելը 100-ամեակի ձեռնարկներու ծրագրաւորումին հիմքը պիտի հանդիսանայ, պէտք է հանդիսանայ, որովհետեւ մենք մէկ մասն ենք հայոց պետութիւն, հայկականութիւն կոչուող այդ ամբողջութեան ու անոր ոյժը զգալու, ապրելու, բայց մանաւանդ ապրեցնելու համար ոչ միայն ճշգրիտ կերպով պիտի գնահատենք անոր դերը, այլ մեր ընելիքը եւս կարեւորութեամբ պիտի սահմանենք՝ հեռու մնալով կրաւորականութենէ ու գործուն մասնակցը դառնալով հայութեան ու հայկականութեան:

Սփիւռքի պայմաններուն մէջ ապրող մեր սերունդները պէտք է իմանան մեր պատմութեան այս լուսաւոր էջին խորհուրդը, անկախ պետականութեան ստեղծման համար մաքառող մեր ժողովուրդին նկրտումներուն Մայիս 28-ով պսակադրումը. այն ժողովուրդին, որ ցեղասպանութեան մոխիրներէն փիւնիկի նման յառնեցաւ եւ համաշխարհային մեծ ընտանիքին մէջ իր արժանաւոր տեղը գրաւեց:

Իմանալը բաւարար է սակայն: Իմանալով ու ճանչնալով, ճանչնալով ու բան մը փոխելով, այդ արժէքներուն վրայ արժէք մըն ալ անելու պիտի արդարացնենք մեր գոյութիւնը: Այլապէս՝ տօնակատարութիւններու հմայքով գինովցած անպագայ հաւաքականութեան մը պիտի վերածուիք:

Անկախութեան 100-ամեակն է...

100-ամեակին պատգամը նախ պիտի հնչէ մեր վարժարաններէն ներս: Այնտեղ, դասապահներու նեղ ժամերէն դուրս գալով, որքան շահեկան պիտի ըլլայ կազմակերպել պատմութեան յատուկ աշխատանքային պահեր, զրոյցներ, բանավեճեր, արտադասարանային ծրագիրներ, օգտագործել լսատեսողական միջոցներ ու համացանցային բազում կարելիութիւններ: Այլ խօսքով՝ մղել մեր աշակերտները, որ հետաքրքրուին, պրպտեն, ճանչնան իրենց արմատները ու որոնեն իրենց իսկ դերը անոնց կառչած մնալու մեր տընութեան մէջ:

Յետոյ այդ պատգամը պիտի արտացոլայ մեր միութիւններու դաստիարակչական ծրագիրներուն ընդմէջէն ու մենք պահ մը հարց պիտի տանք, թէ որքանո՞վ են անոնք ժամանակակից, ինչպիսի՞ աղբիւրներ պէտք է օգտագործել վերամշակելու այդ ծրագիրներն ու ներկայ պահանջներուն յարմարեցնելու զանոնք: Ի՞նչ է դերը միութեանական այն երիտասարդին, որ մասն է հայրենի եւ սփիւռքացած ժողովուրդի մը, որ ունի անկախ հայրենիք, բայց նաեւ անկատար տենչեր: Ո՞ր կը սկըսի անոր պայքարը եւ ո՞ր կ'աւարտի, որքանո՞վ կը համեմատուի ան մեր նախնիներուն մղած պայքարին հետ:

Եթէ կարենանք ճշդել մեր երիտասարդութեան դերը, անոր առաջնահերթութիւններն ու մարտահրաւերները եւ օգնել անոր՝ գտնելու իր արմատներուն ու ազգային իղձերուն կառչած մնալու յստակ ուղին, այն ատեն, հաւանաբար, ճշգրտօրէն արժեւորած պիտի ըլլանք 100-ամեակներն ու անոնց խորհուրդը:

«Գ.»

-Ռուսական Տումայի պաշտպանութեան յանձնախումբի նախագահ Վլատիմիր Շամանով հաստատեց, որ Ռուսիա յարմարագոյն ձեւով պիտի պատասխանէ Սուրիոյ մէջ նոր գինեալ խմբաւորում մը յառաջացնելու Ուաշինկթընի դաշնութեան վերջին ծրագրաւորման:

Ռուսական Նովոսուի լրատու գործակալութիւնը մէքերելով Շամանովի խօսքը յայտնեց. «ԱՄՆ-ի կողմէ Սուրիոյ մէջ նոր ոյժի մը յառաջացումը կը հակասէ Ռուսիոյ շահերուն, հետեւաբար Ռուսիա, իր դաշնակիցներուն հետ գործակցաբար, այս քայլին պատասխանելու համապատասխան միջոցները պիտի գտնէ ու ամէն ջանք ի գործ պիտի դնէ պահպանելու Սուրիոյ խաղաղութիւնը»:



Յիշենք, որ Ուաշինկթընի կազմած դաշինքը նախապէս յայտնած էր, թէ կը նախապատրաստուի յառաջացնել Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանին մէջ 30.000 զինեալներէ բաղկացած նոր խմբաւորում մը:

-Երեքշաբթի, 16 Յունուար 2018-ին, Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ սկսաւ Իսլամական Համագործակցութեան Կազմակերպութեան անդամ պետութիւններու խորհուրդներու վեհաժողովին 13-րդ նստաշրջանը, որուն մասնակցեցաւ նաեւ Սուրիոյ պատուիրակութիւնը՝ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպարի գլխաւորութեամբ:



Վեհաժողովի բացումին, Իրանի նախագահ Հասան Ռոհանի իր պատգամին մէջ համագործակցութեան կոչ ուղղեց իսլամական երկիրներուն՝ արմատախիլ ընելու ահաբեկչութիւնն ու հաւատադրժողական գաղափարախօսութեան ծառայող շարժումները:

Ռոհանի ըսաւ. «Իրան առաջատար այն պետութիւններէն էր, որ նեցուկ կանգնեցաւ Սուրիոյ եւ Իրաքի՝ ահաբեկչութեան դէմ իրենց պայքարին մէջ»:

-Հալեպի Հարաւային արուարձանին մէջ, Սուրիական բանակը «ճապահաթ ալ Նուրա»ի եւ այլ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու դէմ բռն մարտեր մղելէ ետք, ազատագրեց Շահիտ բլուրն ու անոր յարակից 3 գիւղերը՝ ետ մղելով գինեալ ահաբեկչական խմբաւորումները: Բանակին երկրաչափական միտումները ականազարծեցին շրջանը:



-Իրանի Իսլամական Յեղափոխութեան ղեկավար սեյիտ Ալի Խամենայի Իսլամական Համագործակցութեան կազմակերպութեան անդամ պետութիւններու խորհուրդներու վեհաժողովին 13-րդ նստաշրջանին մասնակցող պատուիրակութիւններուն եւ խորհրդարաններուն նախագահներուն ընդունելութեան ընթացքին յայտնեց, որ Իրան Սուրիոյ նկատմամբ իր պարտքն է որ կը կատարէ՝ մեկնելով իր առաքելութենէն: Խամենայի Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպարի միջոցաւ իր ողջոյնը յղեց Սուրիոյ նախագահ Պաշարալ Ասատին:



Ապա անդրադառնալով Երուսաղէմին ըսաւ, որ Պաղեստին պետութիւնն է պատմութիւնն է, որ կ'երկարի գետնէ մինչեւ ծով՝ իր մայրաքաղաք Երուսաղէմով: Ան շեշտեց, որ ԱՄՆ-ի անօրէն արարքը անարձագանգ պիտի չմնայ, ան պիտի չկարենայ իր նպատակին հասնիլ, իսկ Իրաքի ղեմ մենք պիտի շարունակենք պայքարիլ մինչեւ արդարութեան հաստատումը:


Սապպարի, իր կարգին, Խամենայիին փոխանցեց Սուրիոյ նախագահին եւ ժողովուրդին ողջոյններն ու շնորհակալութիւնը Իրանի զօրակցական կեցուածքին համար, յայտնելով՝ Սուրիա Իրանին ու անոր ժողովուրդին ու ղեկավարութեան կողքին պիտի կանգնի արտաքին բոլոր սպառնալիքներուն դէմ:

### ԳՈՅԺ

Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի մեծ ընտանիքը կը գուժէ մահը իր վաստակաւոր ուսուցիչին՝ տիար Վահէ Գասարճեանին:

Հալեպի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ դպրաց դասի անդամները խոր ցաւով կը գուժեն մահը իրենց վաստակաշատ դպրապետին՝ տիար Վահէ Գասարճեանին, որ պատահեցաւ Կիրակի, 14 Յունուար 2018-ին, Երեւան:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի եւ վաստակն ապրողաց օրհնեալ եղիցի: Ամէն:



## Լուրեր Հայաշխարհին

### ՀՀ ԱՆԽԱՊԱՅՑ ՉԱՆԻՊՈՒՄ ՈՒՆԵՃԱԾ Է ՀԱՅՐԵՆԻ ՄՏԱՌՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՏ

Երեքշաբթի, 16 Յունուար 2018-ին, «Հայաստանի ազգային հեռուստատեսություն» կրթման արժանապատիվ Յոլի հաննե Գեքիճեանին «Հայրե-



նիք» շքանշանի յանձնման հանդիսարարությամբ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը նախագահի նստավայրին մեջ հանդիպում ունեցած է այդ

արարողության մասնակից խումբ մը մտաւորականներու հետ:

Հանդիպումին սկիզբը նախագահը, նշած է, որ անցած տարիներուն պարբերաբար հանդիպումներ ունեցած է մտաւորականութեան ներկայացուցիչներու հետ, անգամ մը եւս ընդժամ է երկրի կեանքին մէջ մտաւորականութեան դերին ու առաքելութիւնը եւ առաջարկած բաց ու անկաշկանդ մթնոլորտի մէջ խօսիլ Հայաստանի եւ անոր ապագային մասին, յատկապէս Սահմանադրութեան փոփոխութիւններէն ետք կառավարման նոր համակարգի պայմաններու մէջ՝ ակնկալելով լսել մտաւորականներու տեսակետները, առաջարկները,

ինչպէս նաեւ մտահոգութիւններն ու գնահատականները երկրի իրականութեան վերաբերեալ:

Հանդիպումին մասնակիցները կարեւոր նկատած են նման հանդիպումներն ու քննարկումները, նաեւ անհրաժեշտ նկատած են խօսիլ Հայաստանի ապագայի իրենց պատկերացումներուն, հասարակութիւնը մտահոգող խնդիրներուն, որոնց կարգին՝ երիտասարդներու կըրթութեան, պետութեան քաղաքացի դաստիարակելու գործին մէջ մշակոյթի մեծ դերին, հայոց լեզուի անաղարտութեան պահպանման եւ շարք մը այլ խնդիրներու մասին:

Նախագահը պատասխանած է նաեւ մտաւորականները հետաքրքրող հարցումներուն, որոնք կը վերաբերին երկրի անվտանգութեան, պաշտպանութեան եւ արտաքին քաղաքականութեան: Հանդիպումին մասնակիցները հանրապետութեան նախագահէն հետաքրքրուած են, թէ ան՝ իբրեւ երկրին մէջ երկար տարիներ բազմաթիւ պատասխանատու պաշտօններ գրաւուցած, բազում դժուարութիւններով եւ պատերազմի բովով անցած անձ եւ քաղաքական առաջնորդ, ինչպէ՞ս կը պատկերացնէ ապագայ նախագահը, ըստ անոր ի՞նչ չափորոշիչներու պէտք է համապատասխանէ հանրապետութեան յաջորդ նախագահը:

Ներկայացնելով իր պատկերացումը հանրապետութեան ապագայ նախագահին մասին՝ նախագահ Սերժ Սարգսյանը նշած է, որ կը կարծէ՝ իսօքը պէտք է վերաբերի մարդու մը, անհատի մը մասին, որ անցած ճամբայ ունի, ունի ճանաչում եւ երկրի ներքւ, եւ դուրսը, կըրնայ պատշաճ մակարդակով, ըստ արժանւոյն ներկայացնել Հայաստանը արտերկրի մէջ, այսինքն՝ կատարել իր ներկայացուցչական գործառնությունները եւ երկրի ներքւ, եւ երկրէն դուրս: Ապագայ նախագահը, Սերժ Սարգսյանի պատկերացումով, պէտք է տիրապետէ օտար լեզուներու, ունենայ լայն կապեր թե՛ Սփիւռքի եւ թե՛ Հայաստանի մէջ, վայելէ հեղինակութիւն եւ ամենէն կարեւորը՝ անկողմնակալ մարդ ըլլայ, երբեք քաղաքականութեամբ զբաղած չըլլայ եւ կուսակցութեան անդամ եղած չըլլայ:

### Վաշտ Գոյոսաստեան. «Պէտք է անխնայ անյոյս թեկնածուներէ մտնել, որ ընդհանուր չարքանդաներէ մտնելը»

ՀՀ խմբակցութեան ղեկավար Վահրամ Գոյոսաստեանը Հայաստանի խորհրդարանին մէջ լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին ըսաւ, որ մօտօրէն երկրի նախագահական թեկնածուներուն մասին քնն-



ծեկը. երկրի ճակատագիրին, երկրի ղեկավար կազմին առաջին դէմքերուն մասին է իսօքը, պէտք է կարենանք այնպիսի թեկնածու մը ներկայացնել, որ քաղաքական բոլոր ուժերուն կողմէ նոյնպէս ընդունելի ըլլայ: Բննարկումներու եւ հանդիպումներու աւարտին, երբ թեկնածուն հանդիպի ընդդիմադիր քաղաքական ուժերու հետ եւս, ինձի կը թուի, որ անոր նկատմամբ քաղաքական ուժերուն կարծիքը կը յստականայ», եզրափակեց ան:

### Հայաստանի Ազգային Ժողովը Ընդունեց Երիտմտերու Ծեղարարութեան Գիտահետազոտական Դասարանի 3-րդ Տարբարութիւն

Երեքշաբթի, 16 Յունուարին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովը 91 կողմ, 1 ձեռքնպահ ձայներով ընդունեց Ազգային



ժողովի 4 խմբակցութիւններուն կողմէ հեղինակուած «Ահաբեկչական խմբաւորումներու կողմէ իրենց վերահսկողութեան տակ գտնուող հրաքի մէջ եզիտի ժողովուրդին նկատմամբ 2014-ին իրականացած ցեղասպանութեան դատապարտման մասին» յայտարարութեան նախագիծը:

նարկումներ տեղի պիտի ունենան:

Լրագրողներու այն պնդումներուն, թէ թեկնածութեան գանազան անուններ կը յիշուին, որոնց կարգին նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի անունը, տեղեկութիւններ ալ կան, որ ան արդէն վերադարձած է Հայաստան, պատգամաւորը պատասխանեց. «Եթէ յիշուի Արմեն Սարգսյանի անունը, բնականաբար անոր թեկնածութիւնն ալ պիտի քննարկուի: Մօտօրէն քննարկումներ պիտի կազմակերպենք թեկնածուներու անուններուն շուրջ: Բնականաբար մէկ թեկնածու պիտի չըլլայ, եւ մենք մէկ թեկնածուի շուրջ քննարկում պիտի չծաւալենք: Ըստ հասկացարար քանի մը թեկնածուներէն ընտրենք մէկ թեկնածու եւ ներկայացնենք գայն ընտրութիւններուն: Բննարկումներէն վերջ կարելի է խօսիլ այս հարցին մասին»:

Գոյոսաստեան յայտնեց, որ Հանրապետական կուսակցութիւնը ընտրութիւնը պէտք է այնպէս մը կատարէ, որ ընտրուողը հանրութեան կողմէ ճանչցուած անձնաւորութիւն մը ըլլայ եւ ընդունելի համարուի նաեւ բոլոր քաղաքական ուժերուն կողմէ:

«Մենք լուրջ հարց պիտի լու-

### Լոյս Տեսած է Ծեղարարութեան Մարի Յովանանիւնի «Ուրսաս Արտքապետութեան Արտահերո, Նորոտայ Գրաբարութեան Եւ Անոն Ըտեղարարութեան» Գիրքը

Երեւանի մէջ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան նիւթակն սօտակարգեալ եւ հովանաւորութեամբ հրատարակուած է ցեղասպանացի Մարի Յովանանիւնի «Ուրսաս Արտքապետութեան Արտահերո, Նորոտայ Գրաբարութեան Եւ Անոն Ըտեղարարութեան» գիրքը: Ուսումնա-



պիրութիւնը կատարուած է Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրութեան կեդրոնի գիտահետազօտական հիմնադրամի բաժնիին մէջ:

«Ակունք»-ի համաձայն, աշխատութեան մէջ ներկայացուած են Հայոց Տեղասպանութեան թրքական ժխտողականութեան քաղաքականութեան հիմքը՝ ցեղասպանութեան ընթացքին, 1965 թուականէն ետք եւ մեր օրերուն: Ըստ հեղինակին, ժխտման հիմնական թեզը, որոնք սկիզբ առած են 1894-96 թուականներու կոտորածներու շրջանին, հետագայ տասնամեակներուն ընթացքին չեն փոխուած, պարզապէս փոխուած են անոնց ներկայացման ձեւերն ու գործընթացները:

«Ըտիթ փրիւթ» հրատարակչութեան կողմէ տպագրուած 168 էջնոց այս աշխատութեան խմբագիրն է Արեւմտահայոց Հարցերու Ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն, հայագետ, բանասիրական գիտութիւններու թեկնածու Հայկազուն Ավրդեան:


  
**ՍՕԽ** Երբ. Կարգութիւն  
**Դաստ.** Յանձնախումբ  
  
**ԵՈՒՄՆ**  
**ԵՒ ԱՆՈՐ ԲՈՒԺԻՉ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ**  
**ՄԵՐ ՄԱՐՄՆԻՆ ԵՒ ՆՈԳԻՆ ՎՐԱՅ**  
  
*Եր դասախօսւթ՝*  
**Տիար Ռագէք Մալօ**  
  
**Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 2 Փետրուար 2018-ի յետմիջօրի Ժամը 4:00-ին, ԱՄժ Տան «Լ. Ըանթ» սրահէն ներս:**

### ՆՍՕՏ ԱՐԱՄ Ա. ...

Սկիզբ՝ էջ 1

ուի հանրապետության եռագույն դրոշմը, կը հնչէ «Մեր հայրենիք»ը եւ Յայաստանը կ'ունենայ միջազգային ճանաչում:

Յայաստանի անկախութեան կերտումին մէջ Նշանակալից դեր կ'ունենայ հայ եկեղեցին: Գարեգին Վրդ. Յովսէփեան (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 1943-52) մասնակից կը դառնայ Սարգսի Կաթողիկոսի կողմնորոշումին՝ իր հրաշունչ քարոզներով քաջալերելով մեր գիւնդերը: Գեորգ Ե. Ամենայն Յայոց Կաթողիկոս կոչ կ'ուղղէ մեր ժողովուրդի գաւակներուն՝ «յոյս չընել օտարի վրայ» եւ ի մի խմբել «մեր ազգային բոլոր կարողութիւնները՝ ... ի փառս ազատ հայրենիքին»: Սահակ Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, տառապանքի ճիրաններուն մէջ տուայտող Կիլիկեան Աշխարհէն իր աղօթքը կը բարձրացնէ առ Աստուած աղաչելով, որ «Տարրոսը Մասիսին կապող եւ հայ արիւնով զեղագարդուած ծիածանը ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան համար ըլլայ Աւետեաց երկիրը, ամբողջական եւ անկասկի Յայաստան առաջնորդող հրեղէն սիւնը»: Յ. Թումանեան, մտաւորականութեան թարգմանը հանդիսանալով, կը բացագանչէ՝ «արդէն իրականութիւն է երեկուայ մեր երազը. ազատ է Յայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանչցուած ինքնուրոյն հանրապետութիւն է նա, իր եռագույն դրոշով կանգնած միւս պետութիւնների շարքում»:



Յեղասպան Թուրքիան կը շարունակէ իր սուրը ճօճել Յայաստանի ուղղութեամբ: Չանագան ճակատներու վրայ յաջորդական յարձակումներ, տնտեսական պաշարում ու դիւանագիտական ճընշում կը սկսին մաշեցնել Յայաստանի ներուժը: Ռուսիայէն ակնկալուած զինուորական ու տնտեսական օժանդակութիւնը չիրականանար:

Սեւրի Դաշնագրի (Օգոստոս 10, 1920) ստորագրութեամբ Յայաստանի առջեւ բացուած յուսալից հորիզոնները շուտով կը մթագնին: Յայաստանը կը մնայ, ինչպէս Յայաստանի Յանրապետութեան վերջին վարչապետը Ս. Վրացեան կ'ըսէ՝ «պղծելիկեան մուրճի եւ թըքական սալի միջեւ»:

Պատմութեան մէջ ճակատագրական պահեր կան, որոնց դիմաց հարկ է հեռու մնալ արկածախնդրական մօտեցումներէ ու կողմնակի նկատումներէ եւ ճիշդ կողմորոշում որդեգրել՝ մեկնելով ազգին ու հայրենիքին ընդհանրական ու գերագոյն շահերէն: Արդարեւ, առճակատում Սովետական Միութեան հետ կրնար կործանումի առաջնորդել Յայաստանը. հայրենիքի փրկութիւնը ամեն բանէ վէր էր: Վտանգալից այս պայմաններուն մէջ, Յայաստանի Յանրապետութեան խորհրդայնացումը (2 Դեկտեմբեր 1920), ամբողջատիրական վարչակարգին ծանր ու դառն հետեւանքները կրելով հանդերձ, ճիշդ ճանապարհն էր:

Յայաստանի մէջ տեղի ունեցած Փետրուարեան ժողովրդային ապրտամբութիւնը (1921) համայնավար բռնատիրական վարչակարգին դեմ, առիթ կու տայ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած Ապրիլ 24-ը յիշեցնող՝ ձերբակալութիւններու, աքսորի ու մահուան...: Ժողովրդային ճնշումին տակ Յայաստանէն հեռացած համայնավար իշխանութեան տեղ Յանրապետութեան ղեկավարութիւնը ստանձնած «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն» չէր կրնար փրկել անպաշտպան մնացած եւ սովի ու համաճարակի մատնուած հայրենիքը:

Ապրիլ 2, 1921-ին Կարմիր Բանակը կը քալէ դեպի Յայաստան: Յայաստանի Յանրապետութեան վերջին ղեկավարները կը հեռանան Յայաստանէն՝ իրենց հետ տանելով անկասկի հայրենիքի եռագույնը, Սփիւռքի մէջ շարունակելու Յայաստանի անկախութեան գաղափարական պայքարը:

Մարդկային դարաւոր պատմութիւնը կը վկայէ, թէ վարչակարգերը ժամանակաւոր են, որքան ալ զօրեղ յետադաններ ունենան. յաւերժական են ազգերը՝ իրենց հայրենիքով ու մշակոյթով: Համայնավար վարչակարգը չկրցաւ սպաննել անկախութեան գաղափարը հայրենի ժողովուրդի կեանքէն ներս. իսկ Սփիւռքէն ներս իր բաժանարար քաղաքականութեամբ չկրցաւ մարել յոյսը անկախութեան ու նսեմացնել ամբողջական Յայաստանի՝ ամբողջական հայութեամբ տեսլականը: Եւ այսպէս, Մայիս 28, 1918-ին ստեղծուած Յայաստանի առաջին Յանրապետութիւնը եւ Դեկտեմբեր 2, 1920-ին պայմաններու պարտադրանքով վարչաձեւի փոփոխութեան ենթարկուած Յայաստանի Յանրապետութիւնը, Սեպտեմբեր 21, 1991-ին կը վերահաստատէ իր անկախութիւնը: Անկախութիւնը սրբազան արժէք է ու գայն կերտող ու պաշտպանող ժողովուրդն է: Հետեւաբար, Յայաստան-

նի անկախութիւնը գաղափարական ու քաղաքական մօտեցումներէ ու տարբերութիւններէ վէր պետք է մնայ: Յայոց ցեղասպանութեան յաջորդող տարիներուն ու համաշխարհային տագնապալից պայմաններուն մէջ ստեղծուած Յայաստանի առաջին Յանրապետութիւնը համահայկական խորունկ նշանակութիւն ունի: Այս ելնախորհի վրայ հարկ է արժեւորել ու նշել 100-ամեակը այս պատմական դէպքին:

Կովկասը միշտ եղած է լեցուն ներքին առճակատումներով եւ ենթակայ՝ հեռաւոր թէ մօտաւոր ուժերու աշխարհաքաղաքական շահերուն ու դիրքորոշումներուն: Կորսնցուցիկը Յայաստանի առաջին անկախութիւնը՝ մեր շուրջը փչող զօրեղ քամիներուն հետեւանքով: Այսօր եւս Կովկասը կը գտնուի նոյն կացութեան մէջ: Հետեւաբար, զգո՞յձ, ժողովուրդ հայոց, ճիշդ կարդանք «ժամանակի նշանները». չհեռանանք հայրենի հողէն, հաւատարիմ մնանք հայրենիքի անկախութիւնը իրենց արիւնով կերտած մեր հին թէ նոր հերոսներու սրբազան կտակին. հզօրացնենք Յայաստանը իր բանակով, տնտեսութեամբ ու միջազգային դիւանագիտական կապերով: Յայաստանի ու Արցախի պետականութեան ամրացումը ու անկախութեան ամրապնդումը հիմքն են մեր ազգային պահանջատիրութեան ու երաշխիքը՝ մեր ազգի պայծառ ապագային:

Արդ, 1 Յունուար 2018-ին, Յայաստանի առաջին Յանրապետութեան 100-ամեակի սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն սոյն Յայրապետական Սրբատառ Կոնդակով կոչ կ'ուղղուէ.-

- Մեր թեմերուն, Յանրապետական Մաղթանքի կատարումով, իրապարակային հանդիսութիւններով եւ այլազան ծրագիրներու իրագործումով, հանդիսաւոր կերպով նշելու այս կարեւոր թուականը մեր ժամանակակից պատմութեան:

- Մեր կազմակերպութիւններուն, միասնական ոգիով ու ժողովրդային լայն մասնակցութեամբ ու զանազան ձեռնարկներու ճամբով, արժեւորելու պատմական այս դէպքը հայ կեանքէն ներս:

- Մեր կրթական կառույցներուն, հայակերտումի մեր ճիգին մէջ յատուկ կարեւորութեամբ շեշտելու անկախութեան իմաստը, որպէս ամուր հիմքը մեր հայրենիքի հզօրութեան ու ազգին յաւերժութեան:

- Մեր մտաւորականներուն, աշխատասիրութիւններու ու դասախօսութիւններու ճամբով վերլուծելու եւ վերարժեւորելու առաջին Յանրապետութեան դերը՝ Յայաստանի թէ Սփիւռքի մէջ, անկախութեան ոգին ու տեսլականին արձարձած պահպանման եւ Յայաստանի երկրորդ անկախութեան ստեղծման մէջ:

- Մեր ժողովուրդի գաւակներուն, 100-ամեակին առիթով՝ կարողալով, լսելով ու զանազան ձեռնարկներուն մասնակցելով, լայն ծանօթութիւն ունենալու Յայաստանի առաջին Յանրապետութեան մասին եւ անդրադառնալու անկախութեան եզակի կարեւորութեան մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Պետք է հաւատարիմ մնալ արիւնով ու քրտինքով կերտուած հայրենիքի անկախութեան ու գայն պաշտպանել ամեն գնով: Այս է պատգամը Յայաստանի առաջին Յանրապետութեան 100-ամեակին: Անկախութեան ճանապարհին արիւն թափողները հերոսներ ու նահատակներ են: Հետեւաբար, եկէք խոնարհի՜ր Յայաստանի առաջին Յանրապետութեան ստեղծման ու պաշտպանութեան, ինչպէս նաեւ Մայիս 28-էն մինչեւ այսօր, Յայաստանի Յանրապետութեան ու Արցախի անկախութեան համար պայքարած, ծառայած ու նահատակուած մեր բոլոր յայտնի թէ անյայտ հերոսներուն անմեռ յիշատակին առջեւ:

Ողջ լերուք ի Տեր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւետ օրինեալ ի Մենջ: Ամէն:

Կիրակի, 14 Յունուար 2018-ին, Բերիոյ Յայոց Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ կարդացուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսին սրբատառ կոնդակով՝ Յայաստանի Յանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին առիթով:

**Ծանօթ**  
**Վեհափառ հայրապետը կոչ ուղղած էր հայկական բոլոր կազմակերպութիւններուն, մտաւորականութեան եւ հայորդիներուն՝ միասնական ոգիով եւ յաւուր պատշաճի, յիշատակելու հայ ազգի պատմութեան մէջ պատմական նշանակութիւն ունեցող այս իրադարձութեան 100-ամեակը:**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Թարխանեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեանին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Թաղականութեան եւ Դպրաց Դասին, Նոր Գիւղի շրջանի պաշտպան տղոց եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ**  
**ՎԱՀԷ ԹԱՐԽԱՆԵԱՆԻ**

*մահուան սուգին:*  
**Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 21 Յունուար 2018-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալեպ:**  
Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:  
**Ներկայս ընդունիլ իբրեւ քառասունքի ազդ:**



## Ո՞Վ Է ՀԱՅԵ

**Իրականացրո՞ւ երազանքներդ: Այդ պահը եկե՞լ է: ԿԱՊՐԻԷԼ ԿՐՈՍԻՎ ՄԱՐՔԵՍ**

Երկրի գարգացման հետագայ ընթացքը լուսաւորող ընդհանուր համակեցական տեսլականի բացահայտութիւնը հայաստանեան արդի հասարակութեան ներքում ինքնուրուպեան ճգնաժամի պատճառ է դարձել:

Հայրենի հողի վրայ հայութեան նպատակների իրականացման համար Հայաստանը պետք է դառնայ այն գրաւիչ ընկերային միջավայրը, որտեղ մեր ազգային երազանքները համադրում են առաջադիմութեան մասին մարդկութեան պատկերացումները խտացնող՝ համամարդկային գաղափարների հետ: Դրանք բացակայութեան պարագայում համախմբման ներագգային աշխատակարգերը կը մնան սոսկ իբրև մեր պետական օրկանիզմի հետագայ քայքայումը քողարկող գեղեցիկ կարգախօսներ:

Անցեալի ժառանգութիւն հանդիսացող՝ ընդհանուր ծագման գիտակցում ու քրիստոնեական արժեհամակարգը գոյատեւման միասնական կամքով են օժտում հայ հանրոյթին այնքան ժամանակ, քանի դեռ ուրուագծուի է ընդհանուր արտաքին վտանգը եւ դրա դէմ համախմբուելու, բռնացնելու անհրաժեշտութիւնը: Ցաւօք սրտի, հայոց դիմադրական ոգին, Սասունցի Դաւթիան օգնութեան հասնող Քեռի թորոսի նման, արթնանում է միայն արտաքին վտանգի առարկայացման պահերին: 2016 թուականի ապրիլեան կարծատել, բայց արիւնահեղ պատերազմի օրերին մենք նորից դարձանք նման իրողութեան ականատեսը: Սակայն անմիջական ռազմական սպառնալիքի չեզոքացումից յետոյ ստիպուած էինք արձանագրել, որ հայաստանեան հասարակութիւնը նորից իր «մօր փորն ընկաւ»՝ այդպէս էլ չփորձելով խորանալ տեղի ունեցածի պատճառների մէջ: Դա գալիս է հաստատելու, որ մեր հասարակութիւնը պետական կեցութեան որոշիչների առկայութեան պայմաններում անգամ պահպանել է պետականագուրկ ազգի անաւողական մտածելակերպի ու փոխապայտութիւնը: Մինչդեռ ցանկացած հասարակութիւն կենսունակ է այնքանով, որքանով կարողանում է ապագայի որոշակի տեսլականի վրայ հիմնուած ամէնօրեայ նպատակային գործունէութեամբ ամրապնդել իր ներքին ոյժի քանակական ու որակական ցուցանիշները:

Հայաստանի անկախացումից յետոյ անցած անելի քան քառորդ դարեայ ժամանակամիջոցում համակեցական ընդհանուր միջավայր ձեւաւորելու նպատակ ունեցող ներքին կամ ընկերային տեսլականի մասին այդպէս էլ լրջօրէն չենք մտածել: Մինչդեռ, երբ ունէ հաւաքականութեան մօտ բացակայում է իր համակեցական միջավայրի սեփական ընկալումը, նա կամ դառնում է օտար միջավայրերից բխող արժեքների գերին, կամ էլ հենց ինքն է ձգտում դէպի այդ միջավայրերն ու

արտագաղթում է: Այս պարզ իրողութեան ապացոյցները հայաստանեան ամէնօրեայ կեանքում ու կենցաղում արձանագրում են հայրենի «նորացուած», բայց օտար տեսակների բազմացման, այսինքն՝ հոգեւոր-բարոյական «արտագաղթ» տեսքով: Աւելին. նման շեղումների կողմը հանդիսացող խմբերն



արդէն շատ արագ նկատուի են մեկը միւսին եւ գանազան տգեղ բնորոշումների միջոցով վարկաբեկում են իրար: Դրանցից ամենատարածուածներն են ամբողջովին տրուած՝ «կրակակերներ», երուպական կենցաղի յոռի կողմերն ընտրիական՝ «կապոյտներ», ռուսական քրեաօլիկարիսիայի գռեհիկ կենսակերպի երկրպագու՝ «ռուսուլմաններ» եւ այլ բնորոշումները:

Հիմնականում՝ արտաքին աղբիւրներից սնուող նման խմբերի՝ դրսից արագացող «բուծման» պայմաններում մեզ՝ հայաստանցիներիս համար անյայտ է մնում, թէ ով է այդ դէպքում ժամանակակից ըմբռնումով հայր: Մինչդեռ արտաքին ներդրումների ու դրանցով պայմանաւորուած՝ գոյատեւման աղբիւրների բազմագանցման հետ կապուած՝ մեր երկրի ներքում մեզ անից օտարացող հայերի թիւը գնալով աճելու է՝ է՛լ անելի պառակտելով Հայաստանի հասարակութիւնը: Որովհետեւ եթէ չես ցանկանում կամ չես կարողանում քո երկիրը դարձնել դրախտ, ապա ակամայից փնտռում ես օտար դրախտի բանալիները: Ուստի օտար դրախտ որոնողների միջեւ պայքարի սրումն ահագանգ է՝ սեփական դրախտի մասին մտածելու համար:

Մինչդեռ Հայաստանում այսօր դրախտն ու դժոխքը կողք կողքի են, որովհետեւ նա դարձել է ծայրայեղօրէն պուրժուական երկիր՝ իրեն բնորոշ ցցուն հակադրութիւններով, որտեղ աղքատը ցանկանում է օր առաջ հարստանալ, իսկ հարուստը՝ է՛լ անելի բարգաւաճել: Եւ օրէնքով սահմանուած խաղի կանոնների փաստացի բացակայութեան պայմաններում Հայաստանում հիմնականում ցանկանում են մնալ նրանք, ովքեր այս կամ այն պատճառով դուրս են մնացել համընդհանուր պուրժուականացման գործընթացից: Բայց անարդիւթիւն հաւատարիմ նման պահպանողական շերտերի վրայ հիմնուող հասարակութիւնը չի կարող ունենալ ընդհանուր համակեցական տեսլական, որի կողմերը կարող են լինել միայն նրանք, ովքեր նոր յարաբերութիւններն ընկալում են նրանց տիկամիզմ հաղորդող յառաջադիմական մեկնակետից:

Աւելին. եթէ փորձենք ներկայացնել հայաստանեան արդի հասա-

րակութեան ձգտումների խորքային կառուցուածքը, ապա կը տեսնենք, որ բացի գիւղացիութեան ու մտաւորականութեան որոշ շերտերից եւ գիւտուրական խաւի մի մասից՝ այն փաստօրէն ամբողջովին հաճոյապաշտական բնոյթ ունի: Կովկասեան թամատայութիւնները, քեֆերը եւ անելի արդիական ու սանձաբոնակ գուարձանքները իբրեւ բարձրագոյն արժեք ընկալող նման հասարակութեան կողմից դաստիարակուող երիտասարդ սերունդը նոյնպէս վարակուի է նոյն ախտերով: Եւ դրանում նա որեւէ մեղք չունի, քանզի

անցած քառորդ դարի ընթացքում փոխուել է մեր ժամանակի հերոսը: Մինչդեռ մեր ազատութեան համար նահատակուած հերոսները գոհուել են ոչ թէ Հայաստանը վայելքների երկրի վերածելու, այլ՝ հայրենիքի լուսաւոր ապագայի համար: Արդեօ՞ք սա է նրանց երագած Հայաստանը, երբ հայի հաճոյապաշտական նպատակները է՛լ անելի անսանձ ձեւով հնարաւոր է իրականացնել Հայաստանից դուրս: Բայց քանի որ մեր երկրում նոյնպէս սկըսել է գործել Արիստոտելի ժամանակներից յայտնի օրինաչափութիւնը՝ ցանկացած հասարակութեան ներքում գերակայում են իշխող դասակարգի բնորոշ արժեքները, ապա ստեղծուած կացութեան փնտրողումը յստակ է՝ հայաստանեան համակեցական միջավայրի բարեփոխման խնդիրն այսօր բախում է նորելուկ պուրժուազիայի դիմադրութեանը:

Ուրեմն ինչպէ՞ս դուրս գալ այս լաբիրինթոսից, երբ այլեւս հնարաւոր չէ հանդուրժել երկրի գարգացման համար բացուող մեծ հնարաւորութիւնների եւ դրանց իրացմանը խոչընդոտող արգելքների գուգահեռ գոյակցութիւնը: Հայաստանն առաջիկայ տարիներին կարող է իրաւի թռիչքածէ գարգացում ապրել, եթէ իրացուեն այդ հնարաւորութիւնները, բայց կարող է նաեւ յայտնուել արտաքին պարտքերի ու անխուսափելի տեֆուլթի դիմաց իր վերջին հարստութիւններն ու անկախութիւնը վաճառելու վտանգի առջեւ: Ուրեմն ո՞րն է այն յենման կէտը, որն առաջիկայում թոյլ կը տայ իրադարձութիւնների գարգացումը հունաւորել առաջին ուղղութեամբ:

Մեր կարծիքով, հայաստանեան արդի հասարակութեանը համակած ինքնութեանական ճգնաժամի յարթահարման առաջին քայլը երկրի համընդհանուր պուրժուականացման հակաթոյնը հանդիսացող աշխատաւորական Հայաստանի ընկերային տեսլականի յստակացումն է: Որովհետեւ նորելուկ պուրժուազիայի կողմից իրաւաւորւն սպասաւորների, իսկ որոշ դէպքերում պարզապէս ստրուկների վերածուող հայ աշխատաւոր դասակարգի՝ որպէս մէկ ամբողջութեան, իրաւունքների պաշտպանութեան խնդրի տեղաւորութիւնն է հայոց համակեցական միջավայրի ձեւաւորման առաջնա-

յին խոչընդոտող: Հայաստանում հող մշակող, տուն կառուցող, երեխաներ կրթող կամ իր համակարգչի վրայ տեղեկատուական հասարակութեան ձեւաւորմանն ուղղուած առաջին քայլերն անող գիւղացին, բանուորը, ուսուցիչը կամ գիտնականը՝ որպէս աշխատաւորներ, առաջին հերթին բախում են արդարութեան բացակայութեան փաստին: Նման արդարութիւնը պահանջում է հաւասար հնարաւորութիւնների վրայ հիմնուած ազատ մրցակցութեան դաշտի ապահովումը գուրդողել յաւելեալ արդիւնքի բաշխման այնպիսի մեքանիզմների հետ, որոնք, զսպելով աշխատաւորի հաճոյապաշտական ձգտումները, դրանք ուղղորդում են դէպի բաւական պահանջուելների ուղի:

Աշխատաւոր մարդու իրաւունքների պաշտպանութիւնը հարկ է տարանջատել նաեւ բարեգործութիւն անելու՝ աշխատատուի բարի ցանկութիւնից: Նման իրաւունքները պետք է երաշխաւորուեն պետութեան կողմից, որովհետեւ հասարակութեան ունեւոր խաւն այս կամ այն կերպ ապահովում է յառաջդիմութիւնը (մեր պարագայում՝ տնտեսութեան քանակական չափորոշիչների աճի տեսքով), բայց վերջինիս համընդհանրացման խնդիրը կարող է լուծուել նրա արդիւնքների իւրացման շրջանակն ընդլայնող ներդաշնակ համակեցական միջավայրում: Այս ներքին նմանակութեան ձեւաւորման գործընթացում է առաջ գալու սեփական ինքնութեան կողմնակալութիւնը, որն ազգային յիշողութիւնը փոխակերպում է այժմեականութեան թրթռացող կենսակերպի: Մենք կանգնած ենք հայրենասերից քաղաքացու վերածուելու գործընթացի ճիշդ մեջտեղում, ուստի Հայաստանի տնտեսութեան ու դրանից բխող հարստութեան աճի հետեւանքով մեր երկիրը ոչ թէ գարգանում է, այլ՝ լճանում: Ուրեմն հայաստանեան հասարակութեան պուրժուականացումն աստիճանաբար վերածում է ազգային ինքնութեան ճգնաժամի, որովհետեւ նորացման գործընթացում բացակայում է յառաջդիմութիւնն «ազգայնացող», հայկականութեան իրական կողմը՝ աշխատաւորը:

Դա է պատճառը, որ մեր աչքերի առջեւ դատարկուող երկրում ձեւաւորուել է մի գերհարուստ խաւ, որն իր գուարձանքի վայրերում արջեր կամ առիւծներ պահելու փոխարէն՝ շուտով թերեւս անցնելու է փղերի բուծմանը: Եւ այդ անհեթեթութեան ականատես հայաստանեան հասարակութիւնը փոշիանալու է վերը նշուած՝ ամերիկեան «կրանտակերների», եւրոպական «կապոյտների», գռեհիկ «ռուսուլմանների», թուրքական մեղեղիների հայ երկրպագուների, իսկ շուտով հնարաւոր է՝ չինացու տեսք ընդունող «եամենիների» բազմութեան մէջ:

Բայց հարկ է նաեւ խոստովանել, որ մեր գերհարուստ խաւն այսօր ուրիշ անելիք էլ չունի, քանի որ նրա «հայրենիքը» փողն է: Զանգի հողի իրական տերն այն մշակող աշխատաւորն է, որը պետք է վերա-

Թուրքիոյ Հուրջ

ՌՈՒՔԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ. «ՄԵԶԻ ՀԱՍԱՐ ՌԻՂԱԿԻ ԸՆԴԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՅ՝ ՀԱՍԿԱՆԱՆՈՒ, ԹԵ ՈՐՔԱՆ ՎՏԱՆԳԱԽՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱՄ ԷՐՏՈՂԱՆԻ ՓՈՒՍԿԵՐՂՈՒՄԸ»

Հայաստանի արեւելագիտութեան հիմնարկի տնօրէն, թրքագետ Ռուբէն Սաֆրաստեանի խօսքով՝ 2019-ին Թուրքիոյ մէջ սպասուող նախագահական ընտրութիւններուն հետաքրքրականը այն է, որ Ազգայնական Շարժում Կուսակցութիւնը յայտարարած է իշխող Կուսակցութեան առաջնորդին՝ Ռեճեպ Թայյիպ Էրտողանին աջակցելու իր պատրաստակամութիւնը:

Սաֆրաստեան «Թերթ»-ին հետ ունեցած իր գրոյցին ընթացքին յայտնած է, թէ սա կը նշանակէ, որ Էրտողանի քաղաքականութեան համաձայն տեսնելով երկրի ազգայնամուլ, փանթուրքիզմի ջատագով շրջանակները:

«Այս իմաստով անգամ մը եւս կ'ապացուցուի, թէ որքան վտանգաւոր է Էրտողանի քաղաքականութիւնը, յատկապէս արտաքին քաղաքականութիւնը, որ, իսլամամետ ըլլալով մեկտեղ, վերջին շրջանին ձեռք բերած է նաեւ փանթուրքիստական ուղղութիւնը: Ապացուցելու է Ազգայնական Շարժում Կուսակցութեան աջակցութիւնն է», ըսաւ ան:



«Թերթ»-ի այն հարցումին, թէ արդե՞տօք թուրք ազգային գործիչը, վերջերս հիմնադրուած «Լաւ» Կուսակցութեան առաջնորդ Մերալ Աքքեներ Էրտողանի մօտեղ հակառակորդը չի համարուիր, Ռուբէն Սաֆրաստեան պատասխանեց, որ քիչ է հաւանականութիւնը անոր, քանի որ ան կուսակցական գործունեութեան մէջ ակնկալուած փորձառութիւնը չունի:

Թրքագետին խօսքով, Թուրքիոյ մէջ ընտրութիւններուն նախօրէին պետք է մոռնալ ընդդիմադիր ժողովուրդի Հանրապետական Կուսակցութեան դերը: «Այդ Կուսակցութիւնը, իր առաջնորդ Քեմալ Քըլըճտարողլուի թեկնածութիւնը առաջարկելով, կը փորձէ իր շուրջ համախմբել բոլոր դժգոհները, որոնք փոքր թիւ չեն կազմեր: Զեմ կարծեր, որ ան կը հասնի նշանակալից արդիւնքներու, բայց ամէն պարագայի կը ստեղծէ հարթակ մը, ուր Թուրքիոյ որոշ ընդդիմադիրներ կրնան համախմբուիլ», յայտնեց ան:

Խօսելով քրտամետ ժողովուրդներու ժողովրդավարական Կուսակցութեան կարելիութիւններուն մասին, Ռուբէն Սաֆրաստեան նկատել տուաւ, որ Էրտողան ամենամեծ վտանգը կը տեսնէ այդ քաղաքական ոյժին գոյութեան մէջ: Այդ իսկ պատճառով, այս շրջանին այդ ոյժը մեծ հարուածներ կրեց, առաջնորդները ձեռքակալուեցան:

«Էրտողան մտավախութիւն ունի, որ քաղաքական այդ ոյժը իր շուրջ համախմբէ քրտական բոլոր ուժերը եւ առաւել արեւելքային հարցը», ըսաւ ան:

Անդրադառնալով Թուրքիոյ նախկին նախագահ Ապտուլլա Կիլիի որպէս նախագահի թեկնածու առաջադրումին, Սաֆրաստեան դիտել տուաւ, որ ան իրականութեան մէջ կիւլեւեականներուն թելը կը ներկայացնէ, եւ եթէ հաշուի առնենք, որ շատ մը կիւլեւեականներ ձեռքակալուած են, ապա պետք է հասկնանք, որ Կիլիի հեղինակութիւնը բարձրանալու կարելիութիւն չունի: «Կիլիի պարագային գոյութիւն ունի նաեւ այլ հարց մը. տակաւին յայտնի չէ, թէ ան ո՞ր կուսակցութեան կամ կուսակցութիւններուն կողմէ պիտի առաջադրուի: Նոր կուսակցութիւն մը կազմելու համար ալ շատ քիչ ժամանակ մնացած է: Այնպէս որ Կիլիի յաջողութեան միակ գրաւականը Էրտողանի կուսակցութեան պառակտումն է: Բայց այդ ալ կարելի չէ, քանի որ Էրտողան իր կուսակցութեան մէջ ունի միանձնեայ բացարձակ իշխանութիւն», ըսաւ ան՝ անելցնելով, որ Կիլի առարկայական տուեալներ չունի Էրտողանին ուժեղ մրցակիցը դառնալու համար:

Ռուբէն Սաֆրաստեան համաձայն գտնուեցաւ այն կարծիքին, որ Էրտողանի վարկանիշը վերջին շրջանին բաւականին ինկած է, սակայն միեւնոյն ատեն ան նկատել տուաւ, որ Էրտողանի կողմէ կիրառուող ճնշումները վախի մթնոլորտ մը ստեղծած են երկրին մէջ:

«Բազմաթիւ ձեռքակալութիւնները, որ եղան ռազմական յեղաշրջման անյաջող փորձէն ետք, կը վկայեն այն մասին, որ Էրտողան յաջողեցաւ այդ դժգոհութիւնները խորքերը ուղարկել, ատոնք չեն արտայայտուիր, ուժեղ է ճնշումներու մեքենան: Կը կարծեմ, որ պատահական ալ չէ, որ անվտանգութեան դրութիւնը անընդհատ կ'երկարաձգեն, որովհետեւ Էրտողան կը հասկնայ, որ այդ ճնշման արդիւնքով, ան կրնայ երկրէն ներս ստեղծել քիչ թէ շատ կայուն իրավիճակ, որ անոր կարելիութիւն կու տայ հասնելու յաղթանակի», ըսաւ ան:

«Պետք է հետեւիկնք, որ հասկնանք, թէ քաղաքական ինչպիսի՞ ուժեր պիտի հասնին իշխանութեան ու այնտեղ պիտի մնան եւ անոնք որքանո՞վ վտանգաւոր են մեր երկրի անվտանգութեան տեսակէտէն: Այս առումով է, որ Էրտողան գիտ կը մտահոգէ, որովհետեւ ան փանթուրքիստական ուղղութեան կը հետեւի, որուն հետեւանքով Թուրքիա պիտի փորձէ անելի սերտ յարաբերութիւններ մշակել Ատրպէյճանի եւ ընդհանրապէս թրքական աշխարհին հետ եւ Ատրպէյճանը Հայաստանի նկատմամբ յարձակողապաշտ քաղաքականութեան մղել: Երեւոյ՞ մը, որ կրնայ մեղմացնել Արցախի հիմնախնդիրն իսաղաղ լուծման կարելիութիւնը», յայտնեց ան:

ՌՎ Է... Սկիզբ՝ էջ 5

կանգնի սեփական իրաւունքները: Խօսքն այստեղ մէկ առանձին երկրում պարփակուած ներամիութիւն «հայկական համայնակարութիւն» կառուցելու, կամ էլ հայկականութիւնը օտար ազդեցութիւններից կատարելապէս գտելու մասին չէ: Ողջ հարցն այն է, որ քաղաքական մանուածապատ դեգերումների արդիւնքում օտարուել ենք ինքնութեան հարցի հանրային բանավեճից եւ, հետեւաբար, երազանքներ ձեւակերպելու հմտութիւնից: Ուրեմն ներկայումս հարկաւոր է ոչ թէ «քղաքարի պարելու» ունակութեամբ գնահատել դիմացինի հայ լինելու չափը, այլ որոշարկել մեր պետական համակեցութեան ընկերային պայմանները եւ ըստ այդմ՝ ուրուագծել այն ընդհանուր ապագայի տեսլականը, որում արդէն ձանձրալի դարձող «դիոլ-գուռնային» կը փոխարինի մեր նոր Խաչատրեանների բարձրարժէք երաժշտութիւնը...

Յայտարարելով իրականութեան մէջ ինքնութեան հարցը հիմնականում դիտարկուել է մի տեսանկիւնից միայն, այն է՝ հայկական ինքնութիւնը լոկ պարզեւ է: Թեւեւ շատ անելի կարելոր է այն գիտակցել իբրեւ առաջադրանք: Ինքնութեան՝ իբրեւ առաջադրանքի տեսլակապաշտ հայեցակերպն է, որը մեզ հնարաւորութիւն պիտի ընձեռի սրբագրել հայի՞ որպէս սոսկ դիմադրողի կամ արձագանգողի ներկայիս կադապարը՝ փորձելով ծնունդ տալ ներսից-գործունեութիւն ծաւալող քաղաքացուն, որի պետական տեսլականը միաւորելու է մեզ իբրեւ ազգ: Պուրժուագիան նման տեսլական չունի, քանի որ իր խորքային էութեամբ աշխարհաքաղաքացի է: Ուստի երբ նրա այս կամ այն ներկայացուցիչին այսօր պատուում ենք «մեծ հայ» բնորոշմամբ, մոռնալով մեք, որ համայնքից արդէն վերած-

ուել ենք պետութեան, որի մեծութիւնը կախուած է երկիրը կառուցողի ու պաշտպանողի պաշտպանութեան շնորհից: Պետականութեան պայմաններում մեծ հայը հայ ժողովուրդն է, որի աղբատ գաւաակները վերջերս ապացուցեցին այդ իրողութիւնը՝ հրաշքեր գործելով թշնամու հետ արիւնտուռ ռազմաքաղաքական ընթացքում: Մեծ Հայքի երազանքն անաղարտ պահած ժողովրդի այս անկտորում ոգին իրական ու առարկայական «Մենք»-ի վերածելու համար անհրաժեշտ ընկերային արդար միջավայրից է ծնուելու մեր ազգային ինքնութեան նոր ընկալումը:

Ուրեմն ներկայ իրավիճակում Հայաստանում ընկերային արդարութեան պահանջն այլեւս սովորական կարգախօս չէ, այլ՝ համակեցական միջավայրի ձեւաւորման ինդիք, ինչը որպէս ազգային-պետական առաջադրանք՝ մեր նոր ինքնութեան յստակեցման նախապայմանն է:

Աւելին. պատերազմի սպառնալիքի ներկայ չեզոքացումը ժամանակային առումով երկարելու դեպքում հայոց աւանդական հերոսականութիւնը նոյնպէս աստիճանաբար մոռացութեան է մատուցելու, եթէ ազգի դիմադրական ոգուն բնորոշ կենսական եռանդը չփոխակերպուի ստեղծագործական վերելքի: Ուստի գիտակցելով, որ ներկայ խաղաղ ընդմիջումն Աստուծոյ պարգէն է՝ իբրեւ բարենպաստ ժամանակ, հարկաւոր է ամբողջական կերպով օգտագործել այդ հնարաւորութիւնը՝ հայոց ընկերային կառոյցի փիլիսոփայութեան մշակման եւ դրա հիման վրայ հայաստանեան հասարակութեան ինքնութեանկան ճզնաժամի յաղթահարման համար:

Բազմավարական հեռանկարի առումով՝ ժամանակի միջին տեսողութեան ծիրում, սա նոյնպէս ազգային անվտանգութեան ապահովման հարց է, ինչպէս սահմանների պաշտպանութեան՝ օրախնդիր առաջադրանքը:

«ՔՈՒ ԱԶ ԶԵՌՔԻ, ՌՎ ՏԵՐ, ՓԱՌԱԳՈՐԵԱԼ Է ԶՕՐՈՒԹԵԱՄԲ» (Ելից 15.6) ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՉԱԿՈՒԹԵԱՆՐ՝ ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒ Կիրակի, 21 Յունուար 2018, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, Ս. Երրորդութիւն (Զուարթնոց) եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ: Կոչ կ'ուղղենք մեր սիրելի Հաւատացեալ ժողովուրդին, որ միասնաբար աղօթենք եկեղեցիներու միութեան համար, որպէսզի Քրիստոսի սէրն ու խաղաղութիւնը վերարձարծուին մեր ժողովուրդի գաւակներուն կեանքին մէջ: Արդ, ջերմօրէն կը թելադրենք ու կը հրաւիրենք Հալեպահայութիւնը ներկայ գտնուելու այս հոգեպարար Հաւաքական արարողութեան: Զերմ սիրով եւ օրհնութեամբ Աղօթարարք՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան Արևի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան Վերապատուելի Յարութիւն Սելիմեան

## ԳԱՆՁԱՏԱՐ՝ ՃԻՆՈՇՅԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՆԱՐԿԻ ՍՈՐԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՒԼԻՆ

Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին 50-ամեակին առիթով, հաստատության Չարիակալազի- թովալաքեանին: Շնորհակալազի- ռը տրուեցաւ առ ի գնահատանք հաստատութեան տարիներէ ի վեր



ըը, ԱՄՆ-յ կեդրոնին հովանաւորութեամբ կազմակերպեց զանազան հանդիսութիւններ եւ ընդհանուր ժողով մը: Հանդիսութիւններուն մաս-

տարած աշխատանքին, ի մասնաւորի որպէս արժեւորում անոր Սուրիոյ պատերազմի ճգնաժամային տարիներուն տարած գործունեութեան:



նակեցեան հաստատութեան բոլոր մասնաճիւղերը եւ անցեալին ու ներկայիս ծառայող անդամները:

Սուրիոյ տնօրէնուհին երախտագիտական զգացումներով շնորհակալազի ռը յիշեց Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի Սուրիոյ երեք մասնաճիւղերուն անձնակազմերուն՝ յայտնելով նախկին պաշտօնեաներուն եւ խորհրդատու մարմիններուն կատարած աշխատանքներուն կարեւորութիւնը: տնօրէնուհին երախտագիտական խօսք ուղղեց երեք համայնքապետներուն, որոնց օրհնութիւնն ու անվերապահ աջակցութիւնը մշտապէս վայելած է հաստատութիւնը: Տնօրէնուհին հաւաստիացուց, որ առանց կեդրոնի անսահման վստահութեան եւ լիակատար աջակցութեան ու իւրաքանչիւր պաշտօնեայի նուիրեալ աշխատանքին Սուրիոյ Մասնաճիւղը պի-



50-ամեակի պաշտօնական յիշատակումին ընթացքին, ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան նախագահական շնորհակալազի յանձնեց հաստատութեան Սուրիոյ Մասնաճիւղի տնօրէնուհի Թալին

տի չկարենար հաստատութիւնը պահել պատենշի վրայ եւ անձնուիրութեան ոգիով շարունակել հիմնադիր բարերարին՝ Վարդան Ճինիշեանին ազգի գաւակներուն ծառայելու առաքելութիւնը:

### Նշմար

## ԻՆՉՈՒՒՄ ԼԱՏԻՆԱՏԱՌ

Ս. Ծննդեան տօնին առիթով առցանց շնորհաւորանք ստացայ Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն, ԼԱՏԻՆԱՏԱՌ...

Եթէ այս լուրը հաղորդողը Յակոբ Պարոնեանը ըլլար, այս մէկ տողով պիտի բաւականանար, քանի որ «Հասկցողին շատ բարեւ...», ինչպէս իր «Ազգային ջոշեր»ուն մէջ տեղ մը ըրած է, երբ խօսած է ազգային ջոշի մը մասին, որուն ցայտուն մէկ «ազգասիրութիւնը» եղած է թաղին մէջ մզկիթ մը կառուցելը...

Հասկցանք որ Հայաստանի մէջ համացանցի ու հեռախօսի ընկերութիւնները իրենց բաժանորդներուն լատինատառ հայերէն նամակներ կը յղեն, սակայն Էջմիածինի այս ըրածը չկրցայ մարսել, ուստի դիմեցի բարեկամներու, որոնք զիս քիչ մը հանգստացուցին, ըսելով որ իրենց շնորհաւորանք հասած է երկու ձեռով, թէ լատինատառ եւ թէ հայատառ: Հակառակ լուսաբանութեան, չհասկցայ լատինատառին կարեւորութիւնը: «Լատինատառ» կ'ըսեմ, սակայն, իսկութեան մէջ ռուսատառ է, այնպէս որ կ'երեւի յղուած է հայերէն իմացողներուն, որոնք հայատառ գրութիւն չեն կրնար կարդալ եւ կը նախընտրեն ռուսատառ նամակագրութիւն, ինչ որ յաճախ կ'երեւի դիմատետրի էջերուն վրայ:



Սկիզբը, մեզի համար ալ տարօրինակ էր ու դժուար ընթանելի, սակայն, կամաց-կամաց ընտելացանք: Պատկերացուցեք, հեռաձայնային ընկերութենէն գրութիւն մը հասաւ, որուն մէջ cancer բառը կար, վայրկեան մը այլայլեցայ բառը «քանսեր» կարդացած ըլլալուս, սակայն անմիջապէս որ ռուսատառերու օգտութեան դիմեցի, յայտնի եղաւ որ բառը «ցանցեր» է, ոչ թէ քանսեր...

Հայաստանի մէջ պետք չէ՞ այս վիճակը վերանայ եւ ամէն մարդ մաքուր հայերէնով գրէ: Հայերէնի հանդէպ այս անտարբեր վերաբերմունքը ուղղակի անընդունելի կը գտնեմ: Երբ մեր սփիւռքահայերը դիմատետրի վրայ անգլերէնով, կամ լատինատառ հայերէնով կը գրեն, կ'այպանեմ գիրենք, որ հայերէն չեն գրեր եւ չեն ընդունիր անոնց չըմեղանքն ալ, որ հայերէն տառեր չունին, կամ կը վախճան սխալ գրելէ: Այս պարագային. «Պատճառաբանութիւնը, յանցանքէն աւելի տգեղ է»: Սփիւռքահայունը չեմ ընդունիր, Հայաստանահայունը ինչպէ՞ս ընդունիմ: Եթէ փափաք կայ, ամէն ինչին լուծումը կը գտնուի:

Եւ դեռ կ'աղաւաղենք ու ձայն կը բարձրացնենք, որ արեւմտահայերէնը վտանգուած լեզու է, հապա արեւելահայերէնը ի՞նչ է, այս ընթացքով վտանգուած չէ՞ ան ալ:

Էջմիածինի գանձարանին մէջ են երջանկայիշատակ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետին պատրաստել տուած ակնակաշիւղ, ոսկեծոյլ մեր տառերը. ատուք միայն զա՞րդ են, թէ անգնահատելի մեր Այբուբենին արժանիքները կը ցուցադրեն: Վեհափառը տառերու փոխարէն կրնար ոսկեայ սրբապատկեր մը ձուլել տալ՝ Յիսուս, Աստուածածին, կամ Գրիգոր Լուսաւորիչ, ինչո՞ւ նախընտրութիւնը Այբուբենին գնաց, որպէսզի այսօր լատինատառ մաղթանքներ յղենք, որպէսզի մեր լրագրական լեզուն օտա՞ր բառերով աղաւաղենք, պարզապէս տուրք տալու համար համաշխարհայնացումի՞ն:

Քիչ մը զգաստութիւն պետք է, արագ վերադարձ դէպի արմատներ, դէպի ակունք: Հերիք որքան օտար կեղտաշուրեր հոսեցան մեր գետին մէջ:

Որեւէ լեզուի պաշտպան հանդիսացողները, լեզուի մաքրութեան վրայ իսկողներն ու զայն ապահով կերպով յաջորդ սերունդներուն փոխանցողները կրթութեան ու գրականութեան ոլորտի մարդիկն են՝ ուսուցիչ, գրող, հրապարակագիր: Իսկ եթէ անոնք անհոգ ու անտարբեր են եւ իրենց համար նշանակութիւն չունի թէ լեզուն որքա՞ն կը տուժէ, երբ օտար բառերով ծանրաբեռնուի, ապա՝ վայ եկեր է այդ լեզուն եւ այդ ազգին:

Յակոբ Միքայէլեան

## ՑԵՆՈՏ ԹՈՒՂԹԻ ՍԸ ԿՏՈՐԸ




Շաղիկ Սողոմոնյան

Չալէպի ազատագրումէն ետք, 2017-ին ծրագրած էի այցելել Չալէպի պատմական բերդ... օրերը անցան, ամիսները սահեցան եւ բերդ այցելելու առիթ չունեցայ: Նոյեմբեր ամսուն, աշնանային գեղեցիկ օր մը, հինգ երկար տարիներէ ետք Չալէպ այցելած ընկերուհիս հետ վերջապէս որոշեցի բերդ այցելել:

Չոգեպարար պտոյտ մըն էր: Տեղացի մը ըլլալով մէկտեղ, գրասաշնդիկի մը հոգեբանութեամբ, դանդաղ քայլերով եւ ուշի ուշով չորս կողմս դիտելով կը շրջէի հին Չալէպի կերպարանափոխուած թաղերուն մէջ:

Անսովոր ճամբաներով հասանք Ս. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցի: Եկեղեցին աստուածային նախախնամութեամբ կանգուն էր, շուրջը՝ ակերակ: Ամայացած այդ շրջանին մէջ մէկ էր եկեղեցիէն դէպի աջ թեքուեցանք, մէկ մըն ալ՝ ձախ, երկար թափառելէ ետք, որոշեցինք այցելել նաեւ ճտէյտէի հրապարակ: Մինչեւ հոս հասանք ինչու՞ հոն ալ չէր թափարկեր: Սոսկալի ամայութիւն կը տիրէր, բայց ծով յիշատակներ կային թաղուած այդ քարակոյտերուն տակ: Երջանիկ օրերու բռնաբարուած յիշատակներ: Տեղացի ծերունիի մը հետեւելով հնամեայ արահետներէն, քարակոյտերուն վրայէն ուշադրութեամբ անցանք: Այնտեղ, փլատակ խանութի մը մնացորդացին մէջ աչքիս բան մը փայլեցաւ: Ցեխոտ տետրակի մը վրայ հայերէն գրութիւն մը հետաքրքրութիւնս շարժեց: Տետրակը ձեռքս առի, մաքրեցի ու պայծառ հայերէնը ժպտաց ինծի... առաջին էջին վրայ գեղեցիկ գիրով մը արձանագրուած էր «Նահանջը Առանց Երգի» վէպին ներածականը: Մտքով թռչեցայ դէպի հայերէնի դասագրքիս, յիշեցի պարոն Յակոբ Չոլաքեանի տպատիրիչ ծայրը: «Կը Նահանջէ լեզուն, կը Նահանջէ լեզուն, կը Նահանջէ լեզուն...»: Ուրեմն ասիկա 12-րդ կարգի հայերէնի տետրակ է: Սկսայ թերթաւել տետրակը, յաջորդ էջին վրայ գրուած էր Վազգէն Ծուռանեսէանի կենսագրութիւնը, ուրիշի մը վրայ ալ արաբերէնով բնագիտութեան խնդիր մը լուծուած էր: Այլ յիշատակներ ալ ուզեցի փորձիլըրել, թերթատեցի տետրակը ու անոր մէջ գտայ ծալուած թերթիկ մը, բացի, սկսայ կարդալ... 12-րդ կարգի հարցարան մըն էր, որ գրաշարուած էր հին տառատեսակով: Արդեօք ո՞ր թուականէն պահուած է այս հարցարանը: Յուզումով մը բարձրաձայն կարդացի. «Քարէն Եփփէ Ազգային Ծենարան, 12-րդ կարգ, աստվերջի քննութիւն 1983-84 տարեշրջան»:




պահ մը անսոսացի՝ մտածելով որ այս տետրակին տէրը որքան խնամքով պահած էր ճենարանի իր վերջին յուշի այս պատահիլը, սակայն անողոք պատերազմը եկած ու ցիրուցան ըրած էր ամէն բան՝ կեանք, արձանագրուած ապրումներ, ճենարանէն ներս վերջին շաբթուան յիշատակներ: Չալանաբար այս հարցարանը կը պատկանէր պարոն Մկրտիչեանին. երեցներէն շատ բան լսած էի ճենարանի այս վաստակաշատ ուսուցիչին մասին, յատկապէս անոր թելադրած շարադրութեան պարտականութիւններուն մասին: Ան յաճախակիօրէն շարադրութիւն գրել կը թելադրէր աշակերտներուն եւ իւրաքանչիւրին լեզուին ու ոճին քաջածանօթ էր այն աստիճան, որ առաջին իսկ նախադասութենէն կը հասկնար, թէ աշակերտը ի՞նչ գրած է շարադրութիւնը, թէ՛ գրել տուած: Անոր համոզմամբ աշակերտը յաճախակիօրէն գրելով միայն կրնար զարգացնել իր միտքն ու գրիչը: Իսկ աշակերտին գրելու ունակութիւնը զարգացնելու համար սուր քննադատութեան կ'ենթարկէր անոր գրածը՝ յաջորդին անելի լաւը ակնկալելով:

Այս հարցարանը պահ մը զիս մտածել տուաւ հայերէն լեզուի ուսուցման ծրագրին մասին: Չայերէնաւանդ մեր ուսուցիչներուն հարցուցի, թէ 80-ական թուականներուն ինչ կ'ընդգրկէր ծրագիրը: «Այդ թուականներուն հիմնական կեդրոնացումը եղած է գրականութեան դասագիրքերուն վրայ», ըսին անոնք. ուսուցիչներ, միաժամանակ սակայն, շարադրութեան յաճախակի պարտականութիւններ տալով, աշակերտներուն մօտ քերականութեան եւ շարահիւսութեան օրէնքներուն կիրարկումը զարգացնել փորձած են: Յետագային այս բոլորը բաւարար չէն նկատուած ու ծրագիրը փոփոխութեան ենթարկուած է, հրատարակուած են սոր դասագիրքեր ու անոնց մէջ ներառուած է քերականական օրէնքներու ամբողջական համակարգ մը:

Իսկ այն ժամանակները կարդալով հարցարանը հարցում առ հարցում կարդացի, հասայ շարադրութեան բաժինը. հոն գրուած էր. «Նիւթ՝ վերջին շաբաթը: Այս շարադրութեան նպատակը պիտի ըլլայ կարելի եղածին չափ խիտ տողերու մէջ սեղմել ճենարանական կենսեփոք վերջին շաբաթը: **Յոն պգտիկ կամ մեծ յուշերով պատմումէն անելի կարեւորութիւն պիտի տրուի այն հոգեվիճակներուն, ապրումներուն, տպաւորութիւններուն եւ մտածումներուն, որոնք այդ շաբաթը կը գատորոշեն դպրոցական կենսեփոք միւս օրերէն**»: Պահ մը անսոսացի՝ մտածելով որ այս տետրակին տէրը որքան խնամքով պահած էր ճենարանի իր վերջին յուշի այս պատահիլը, սակայն անողոք պատերազմը եկած ու ցիրուցան ըրած էր ամէն բան՝ կեանք, արձանագրուած ապրումներ, ճենարանէն ներս վերջին շաբթուան յիշատակներ: Չալանաբար այս հարցարանը կը պատկանէր պարոն Մկրտիչեանին.

երեցներէն շատ բան լսած էի ճենարանի այս վաստակաշատ ուսուցիչին մասին, յատկապէս անոր թելադրած շարադրութեան պարտականութիւններուն մասին: Ան յաճախակիօրէն շարադրութիւն գրել կը թելադրէր աշակերտներուն եւ իւրաքանչիւրին լեզուին ու ոճին քաջածանօթ էր այն աստիճան, որ առաջին իսկ նախադասութենէն կը հասկնար, թէ աշակերտը ի՞նչ գրած է շարադրութիւնը, թէ՛ գրել տուած: Անոր համոզմամբ աշակերտը յաճախակիօրէն գրելով միայն կրնար զարգացնել իր միտքն ու գրիչը: Իսկ աշակերտին գրելու ունակութիւնը զարգացնելու համար սուր քննադատութեան կ'ենթարկէր անոր գրածը՝ յաջորդին անելի լաւը ակնկալելով:



Չամաշխարհային առաջին պատերազմէն առաջ՝ 1905-ին, արեւմտահայութեան ազգային, մշակութային, մարզական կեդրոնն էր Պոլիսը, որ իր զարթօնքի շրջանը կ'ապրէր: Պոլիս հաւաքուած էր հայ մտաւորականներու փառանգ մը եւ հայութիւնը ունէր ազգին ճակատագրով մտահոգ ու անոր նուիրուած անձնաւորութիւններ:

1908 Յուլիսին հռչակուած Օսմանեան սահմանադրութիւնը, խորտակելով Սուլթան Չամիտի բռնակալութիւնը, ազատութեան նոր յոյս կը բերէր հայ ժողովուրդին: Չամաշխարհային եւ մշակութային կենսեփոք կողքին մարզական շարժումն ալ կ'օգտուի շնորհուած ազատութենէն եւ կը սկսի արագօրէն զարգանալ: Յաջորդաբար կը կազմուին սորակումներ, ֆութբոլի խումբեր: Սակայն մարզական շարժումի երիտասարդ քարոզիչները բաւարարուած չէին միայն ֆութբոլի խումբերու կազմութեամբ: Անոնք համար մարզանքը միջոց մըն էր դաստիարակելու երիտասարդութիւնը, ազնուացնելու անոր հոգին, մշակելու մարզական ոգին, նկարագրող, խափանելու մոլութիւններու զարգացումը եւ զարկ տալու փոխադարձ յարգանքի մըթնոլորտի աճման:

Այս առաջադրանքները իրագործելու նպատակով հրապարակ կը նետուի ֆութբոլի ակումբի մարզիչ՝ Ծաւարշ Զրիսեան: Ծնորհիւ Լեւոն եւ Գրիգոր Յակոբեան եղբայրներու նիւթական եւ Յ. Յինդիլեանի ու Յ. Ճ. Սիրունիի բարոյական օժանդակութեան՝ Ծ. Զրիսեան 1911-ին կը սկսի իրատարակել «Մարմամարգ» պատկերազարդ մարզական թերթը: Ծաւարշ Զրիսեան իր «Մարմամարգ» պարբերաթերթով կը հետապնդէր մեծ ու գեղեցիկ երագ մը՝ մարզական գանազան միութիւններու ուժերը համախմբել մէկ դրօշի տակ ու առաջնորդել միակ ղեկավարութեամբ: Այս ազնիւ գաղափարը կը խօսեր օրուան բոլոր ղեկավարներուն սըրտին: Այս կոչը անպատասխան չի մնար ու կեդրոնական մարմամարգական հայկական ակումբի մը գաղափարը ծնունդ կ'առնէ ու կը սկսի զարգանալ:

Այս բոլորին իբր արդիւնը 1 Մայիս 1911-ին մեծ յաջողութեամբ տեղի կ'ունենան հայկական ողիմպիական առաջին խաղերը՝ նոր օրեր: Միջոցներէն մէկն էր մարմնապէս առողջ, հաստատ նկարագրի եւ բարոյական հասկացողութեան տէր հայր պատրաստելու համար: Յինդիլեան եղաւ սկաուտութիւնը հայացնող առաջին անձնաւորութիւնը:

1913-ին տեղի կ'ունենան համաշխարհային առաջին պատերազմը եւ 1915-ին տեղի կ'ունենայ հայ ժողովուրդի զանգուածային ահաւոր կոտորածը: Պատերազմի ակարատի թուրքին ցեղասպանութեան դեմ վստահ յղացումով բարձրաճակատ ու վրեժխնդիր հայորդիներ պատրաստելու նախաձեռնարկութեամբ գաղափարապաշտ տօթը երիտասարդներ Պոլսոյ մէջ 16 Նոյեմբեր 1918-ին ժողով մը կը գումարեն եւ կ'որոշեն բոլոր մարզական խումբերը համախմբել Չայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն եւ Սկաուտներ անուան տակ եւ առաջին չորս բաժնուր սկզբնաժողով հիմը կը դնեն ՀՄԸՄ-ին իրականացնելով մեծ եղեռնի նահատակուած Շ. Զրիսեանի ու իր գաղափարակից ու գործակից ընկերներուն երագը:

«Մարմամարգ»-ի սերունդին համար սկաուտութիւնը լաւագոյն



«Մարմամարգ»-ի սերունդին համար սկաուտութիւնը լաւագոյն

«Մարմամարգ»-ի սերունդին համար սկաուտութիւնը լաւագոյն

«Մարմամարգ»-ի սերունդին համար սկաուտութիւնը լաւագոյն

**ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Մամուլի Յանձնախումբ**  
Շաբ.՝ 19 12

Տարիները անցան, սերունդները փոխուեցան: Նորերը անելի լաւ տիրապետած պէտք է ըլլային հայերէնին, բայց իրականութեան մէջ այդպէ՞ս է... ցաւօք՝ ոչ:

Ո՞ր պէտք է փնտռել ուրեմն սահուն, անսխալ հայերէնի մը տիրապետելու մեր աշակերտներուն դժուարութիւնը: Անոնք անհոգութեամբ մէջ, դասաւանդութեան ձեւի՞ն, թէ՛ աշակերտին, ուսուցիչին, ե՛ւ ծնողներուն մօտ ապրումի, նուիրումի նուազումին մէջ:

Ցեխոտ թուղթի մը կտորը որքա՞ն հեռուներ տարաւ զիս, կը տեսնե՞ք...:



## ՀԱՆԴԱՐՑ ԶՐՈՅՑ՝ ՊՈԼՍԱՐԱՅ ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՐԱԳԷՏ ՈՒ ԼՐԱԳՐԱՊԵՏ Ռ. ՀԱՏՏԵՃԵԱՆԻ ՀԵՏ

(«Մարմարա»ի խմբագրությունը ստանձնելուն 50-ամեակին առիթով)

Չրոյցը վարեց՝ Լենոն Շառոյեան

**Լ. Շ. - Հիմա պիտի խնդրեմ որ բանակը 1967-էն մինչեւ 1977 երկարող շրջանին վարագործը, այսինքն՝ խօսինքն ձեր խմբագրատնային տնօրէն տասնամեակին մասին: Անշուշտ, առաջին ակնարկով, թերեւս դժուար թուի այդ տասնամեակը կադրապարհի մը նման անջատել զայն նախորդող կամ իրեն յաջորդող տարիներէն ու խօսիլ անոր մասին՝ իբրեւ մեկուսացեալ սահմաններ ունեցող տասնամեակ մը: Բայց եւ, որքան ալ արուեստական թուի, «Մարմարա»ի յարկին տակ կէս դարու ձեր վաստակը պիտի բաժնեմ առանձին հինգ տասնամեակներու:**

**Գիտեմ որ առաջին տասնամեակը ձեր գրական վաստակին համար ուշագրաւ փուլ մըն էր: Այդ ժամանակաշրջանին է որ լոյս ընծայուեցան ձեր «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ» գրավերլուծական հատորը (1965), «Բառասխալ» պատմուածքներու ժողովածուն (1972), «Կիրակնօրեայ հաշուեփակ» (1973) եւ «Վաստակ» (1976) թատերախաղերը, ինչպէս նաեւ «Օրագրիս տասնընկուորորեակը», որ 1970-ին դեպի Սովետական Հայաստան կատարած ձեր անդրանկ ուղեւորութեան բաբախուն տպաւորութիւնները կը մեկտեղէր (1977): Դեռ կայ «Երուսաղէմ յաւերժական»-ը, որ 1975-ին գրուեցաւ ու տրայուեցաւ «Մարմարա»ի մէջ՝ առանց որ անջատ հատորով հրատարակուելու բախտին արժանանայ յետագային:**

**Ինչպէս կը տեսնուի, բազմաժան գրականութիւն մը մշակելը էք այդ շրջանին: Ու այս բոլորին վրայ՝ կու գար անելնալ օրաթերթ խմբագրելու պարտաւորութիւնը: Այստեղ, կ'ուզէի որ կարկինը լայն բանաք ու մեզի բացատրէք ՕՐԱԹԵՐԹ մը (ո՛չ շաբաթաթերթ մը կամ ամսագիր մը) խմբագրելու իրապատկութիւնը:**

**Յետադարձ հայեացքով մը՝ ինչպէ՞ս կը բնորոշէք այդ տասնամեակը: Որո՞նք էին ձեր գլխաւոր աշխատակիցները խմբագրատան մէջ եւ խմբագրատունէն դուրս: Արտասահմանէն ալ աշխատակիցներ ունէի՞ք: Պատմեցէ՛ք մեզի այս բոլորին մասին:**

Ռ. Հ. - Դժուարինս խնդրեցիք: Եթէ ինձի հարցուի, հինգ անջատ ու իրերայաջորդ տասնամեակներ չկան, կայ յիսուն տարիներէ բաղկացեալ խոշոր ու միակտուր ժամանակաշրջան մը, որուն բաղկացուցիչ տարրերը իրարմէ անբաժան են: Մէկ բան յստակ է. - Անհատը յիսուն տարի վերջ այն չէ՛ ինչ որ էր յիսուն տարի առաջ: Ինչպէս բոլոր մարդիկը, նոյնպէս խմբագիրը տարիներու ընթացքին աննշմար կէրպով կը փոխուի, ճիշդ այնպէս ինչպէս մասնակը ամէն օր աննշմար կերպով կը մեծնայ:

Կասկած չկայ որ առաջին տարիներուն ունէի որոշ վարանումներ,

նոյնիսկ ինքնավստահութեան պակաս: Օրաթերթ մը խմբագրելը, մանաւանդ հայերէն օրաթերթ մը խմբագրելը, մանաւանդ Թուրքիոյ մէջ հայերէն օրաթերթ մը խմբագրելը, իմ սեփական ուժերէս վերջ արդեօք, կամ ես ի՞նչ պետք ունէի այդպիսի պատասխանատուութեան մը տակ մտնելու: Բայց այդ օրինեալ շրջանը ունէր բարեմասնութիւններ, որոնք դժբախտաբար այսօր, յիսուն տարի վերջ, կարօտով կը փնտրուին: Նախ, թերթը ունէր ընթերցող-



ներու շատ խանդավառ բազմութիւն մը: Յետոյ, թերթը ունէր հայերէն գրելու շնորհով օժտուած բազմաթիւ աշխատակիցներ, որոնք սիրայօժար կ'աշխատակցէին թերթին ու հպարտութիւն կը զգային այդ աշխատակցութենէն: Արտասահմանի մէջ հրատարակուած բոլոր թերթերուն հետ կարծես ընտանիք մը կը կազմէինք, ջերմ կապեր կը պահէինք իրարու հետ, իրարու հետ թերթ կը փոխանակէինք: Օրաթերթը շատ կը յարգուէր ժողովուրդին կողմէ, օրաթերթը հեղինակութիւն մըն էր, հզօր ձայն ունէր համայնքէն ներս: Ազգային հաստատութիւններու համար, սկսելով անշուշտ Պատրիարքարանէն, օրաթերթը ժողովուրդին հետ ապրումներ բաժնելու, ժողովուրդին հետ միասնութիւն ձեւաւորելու առաջին կայանն էր: Ամբողջ համայնքին համար օրաթերթը այն մատենան էր, որուն էջերուն մէջ ապագայի համար գրի կ'առնուէր օրուան պատմութիւնը: Կրնա՞նք ըսել որ այս բոլորը այսօր այնքան ուժեղ կը ինչն՝ որքան կը ինչէին յիսուն տարի առաջ:

Բայց կը կարծեմ թէ չեմ սխալիր՝ եթէ ըսեմ որ ես շուտով գտայ այն ինքնավստահութիւնը, որուն պէտք ունէի որպէս «Մարմարա»ի խմբագրատնային: Թե՛ս, ինչպէս դիտել կու տաս, գրական իսկապէս ուշագրաւ գործեր արտադրած էի մինչեւ այդ պաշտօնի ստանձնումը, բայց կը տեսնէի որ գրականութեան ճամբով չէր որ դուն լրիւ կրնայիր հասնիլ քու ժողովուրդին ու կը նոյ-

նանայիր անոր հետ, այլ՝ մամուլի ճամբով էր այդ: Գրական ամսագրերը, որոնք մէջ մենք՝ ես ու իմ գործընկերներս, մեր ստեղծագործութիւնները կը հրատարակէինք, ժողովուրդին այնքան հասանելի չէին, որքան հասանելի էր օրաթերթը: Այլ խօսքով, ժողովուրդը ամսագիր չէր կարողար, օրաթերթը կը կարողար: Այս տեսանկիւնէն մեկնելով, տակաւին առաջին տարիներէն իսկ հասկըցայ որ ես մեր ընդհանուր գրականութիւնը պետք է ամսագիրէն փոխադրէի դեպի օրաթերթ: Ժողովուրդը օրաթերթին մէջ սիրով կը կարդար այն ինչ որ չէր ուզեր կարդալ ամսագրի մը մէջ: Իմ առաջին յաջողութիւնս, - Չեմ գիտեր թէ իրաւունք ունի՞մ ատիկա յաջողութիւն անուանելու, - եղաւ «Մարմարա»ն առաւել գրական թերթ մը դարձնելը:

Բայց ես շուտով ձեռքբերելու իրաւատու մերձեցում ու լեզու, ստեղծեցի քաղաքական նիւթերու իրաւատու մերձեցում ու լեզու, ստեղծեցի քաղաքական նիւթերու իմ սեփական լեզու ու ոճը: Այդ ոճը պետք էր յստակ ու սահուն ըլլար: Բայց ամէնէն առաջ, այդ ոճը պետք է գերադաս նկատէր մեր տոհմիկ ու մշակութային հարստութիւնները: Արդէն, թերթին մէջ հաստատած էի խմբագրական յօդուածի դրութիւն: Ինձմէ առաջ բաւական երկար ժամանակէ ի վեր «Մարմարա»ն վերջ տուած էր խմբագրական սիւնակի մը գոյութեան: Զանկ մը բարեկամներ կը թելադրէին որ ես վերահաստատուէի այդ սիւնակը: Միայն թէ ես քիչ մը յաւակնտ կը գտնէի «Խըմբագրական» բառը ու նախընտրեցի գործածել անելի համեստ խորագիր մը. հաստատեցի խմբագրական սիւնակ մը, որ կը կոչուէր «Մեր կարծիքով»: Այս սիւնակին մէջ ալ սակայն գրականութիւնը եղբայրացած էր քաղաքականութեան հետ: Անհամար յօդուածներ ունիմ այդ շրջանէն, յօդուածներ, որոնք եւս արժանի էին գիրքերու մէջ հաւաքուելու, ինչպէս տարիներ վերջ հաւաքուիլ պիտի սկսէին «Յուշատետր» սիւնակի յօդուածները: Բայց չեղաւ: Այդ յօդուածներն ալ մոռցուած են այլեւս: Միայն թէ այդ շրջանին ես այլեւս ինքնավստահ էի ու սկսած էի հաւատալ որ ես այս գործը կը յաջողէի յառաջ տանիլ: Իմ քանի մը խմբագրականներու մասին գովեստի արտայայտութիւններ կու գային արտասահմանէ: Չեմ մոռնար որ նշանաւոր գրականագետ ու «Հայրենիք» օրաթերթի խմբագիր Մինաս Թեյթեան գիս կը գնահատէր ազգային հարցերու շուրջ իմ «խմբագրական»ներու առիթով եւ իր թերթին մէջ արտատպումներ կ'ընէր ինձմէ: Այս բոլորը կը խրախուսէին գիս ու կը կարծեմ որ առաջին տասնամեակի աւարտին չսպասեցի՝ որպէսզի բոլորովին նոր դիմագծութիւն մը տուած ըլլայի «Մարմարա»ին: Շուտով հասաւ շրջ-

ջան մը, երբ արտասահմանի բոլոր թերթերը յաճախակի կերպով սկըսան արտատպել իմ յօդուածները: Կը կարծեմ որ արխիւներու մէջ պահած եմ իմ յօդուածներէս մեկուն մօտաւորապէս ութը, տասը թերթերու մէջ արտատպուած ըլլալու փաստը: Ասիկա բնականաբար ոյժ կու տար ինձի, ոյժ մը, որ կը շարունակէ զիս ապրեցնել մինչեւ այսօր, հակառակ այն ահաւոր նահանջին, որ յաջորդող տասնամեակներու ընթացքին պիտի արձանագրուէր «առանց երգի»...:

Ամէն պարագայի, առաջին տասնամեակի ամէնէն բախտորոշ պատահարը 1970 թուականին դեպի Հայաստան իմ առաջին այցելութիւնն է: Այս այցելութիւնը կեանքիս մէջ այնքան բախտորոշ եղած է՝ որքան բախտորոշ պիտի ըլլար «Մարմարա»ի պատասխանատուութիւնը ստանձնելու կամ ապագային «Յուշատետր» սիւնակը հաստատելու: Այս այցելութեան ընթացքին, մանաւանդ Գեղարդի այցելութեան դրուագը կարծես իմ մէջ նոր մարդ մը ստեղծեց, գրական նոր ոճ մը թելադրեց: «Օրագրիս տասնընկուորորեակը», որոնք այդ այցելութեան կապակցութեամբ բաւական քաջութեամբ հրատարակուեցան «Մարմարա»ի մէջ, իմ այդ նոր ոճի ձեռքբերակութիւնն է, բան մը՝ որ ճամբայ կը բանար դեպի «Յուշատետր»ի ոճը: Նոյնքան բախտորոշ դեր ունեցաւ 1975 թուականին Երուսաղէմ այցելութիւնս, մաս կազմելով Շնորհք Պատրիարքի շքախումբին: Կրօնական-քաղաքական լայն ենթահողի վրայ փռուած այս այցելութիւնն ալ նոր դուռ մը կը բանար ազգային ու գրական ապրումներու մէջ: Բայց ո՞ր մեկը յիշել: Պետք է վերադառնալ այդ օրերու թերթերուն ու մեկ ամ մեկ դարձնել իրաքանչիւր հաւաքածոյի էջերը, որպէսզի յիշեմ ու վերապրիմ այն ինչ որ հիմա թերեւս մոռցած եմ, հակառակ որ ան դեռ կը շարունակել ապրիլ ու գործել ներաշխարհիս մէջ:

Կը հարցնես թէ որո՞նք էին այդ շրջանի իմ գործակիցներս, խմբագրատունէն ներս կամ դուրս: Առաջին օրերուս ինձի օգնական էին Եղուար Սիմքեշեանը, անելի վերջ՝ Արմենուհի Թերզեանը, միջոց մը Չալեն Պիպեշեանը, Յակոբ Սվազլեանը, Երուսաղէմ Կոպէլեանը: Անելի վերջ, նախ որպէս այցելու, ապա որպէս մնայուն աշխատակից մեզի միացաւ Մաքրուհի Պ. Յակոբեանը, որ շատ կանուխ շրջանէն դարձաւ իմ գլխաւոր օգնականը ու իմ բոլոր գրութիւններուս առաջին ընթերցողը: Ան ինձի օգնական էր մասնաւորաբար հայերէն լեզուի իր ճանաչումով ու իմ գրականութեան նկատմամբ անսակարկ սիրով: Իմ գլխաւոր օգնականները եղան նաեւ իմ երկու որդիները՝ Արիս ու Այգը: Խմբագ-

ԱՆՆՄԱՆ ՔԵՌԱՅՐԱ

Չարագատի մասին գրել, մանաւանդ մահուան քառասունքին առիթով, կրկնակիորեն դժուար է, որովհետեւ ան ոչ միայն քեռայր էր, այլ նաեւ հայր ու եղբայր: Ես եւ քոյրս՝ Մարալը, մեր փոքր տարիքին կորսնցուցած էինք մեր հայրը: Տան բոլոր պատասխանատուութիւնը ստանձնած էր մայրս, պատերազմի տարիներուն կորսնցուցիւք նաեւ մայրս: Քեռայրս սիրայօժար իր ուսերուն վրայ առաւ ծնողքի մը պարտականութիւնը, որպէսզի ես երբեք առանձին չզգամ, բայց ահա այսօր քոյրս՝ Մարալը եւ իր սիրասուն գաւակները՝ Նաթալին եւ Յակոբը, ծնողքը, հարազատները, ընկերները եւ ես կորսնցուցիւք զինք:



Վահէ՛ մեզի համար լաւագոյն մարդ կը նշանակէիր... այո՛, մերօրանուննալ Վահէ էր, ան ալ քեզի նման իր լաւագոյնը տուաւ, բայց շուտ հեռացաւ այս աշխարհէն: Դուն մեզի միշտ բարի անակնկալներով կ'ուրախացնէիր, բայց երբեք պատրաստ չէիք ընդունելու անըստ պատելի մահը: Վերջին շրջանին թէեւ ամողջութիւնդ մտահոգիչ էր եւ բժիշկին մշտական խնամքին կը կարօտէիր, բայց երբեք դուն քու անձիդ մասին չէիր մտածեր:

Յալեպի պատերազմի դաժան տարիներուն, ամենայն գիտակցութեամբ մասնակցեցար Նոր Գիւղի շրջանի պաշտպանութեան ազգանուէր գործին, ծառայեցիր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղակառութեան, ոչ մէկ ճիգ խնայեցիր ուրախացնելու շրջապատդ՝ դրացիներդ, ընկերներդ, ամոքելու անոնց վիշտը: Ես քեզ քու մահուան օրը ճանչցայ կարծես... խուռներամ բազմութիւն, քեզ նկարագրող ջերմ ու սրտաբուխ խօսքեր: Անսման քեռայր, Է՛հ, դուն ալ շուտ հեռացար:

Սակաւախօս էիր, բայց գործակցող: Փոքր տարիքէդ եղար ՅԱԼՄ-ական, ՅԵՄ-ի անդամ: Արհեստաւոր էիր, գործիդ մէջ յաջողութիւններ նուաճած, ճշմարտախօս, ուղղամիտ:

Մենք բոլորս մնացիւք առանց Վահէի: Դառն ճակատագիր, սակայն Աստուծոյ կամքին դէմ չենք կրնար բողոքել: Դուն երկնային համբերութիւն ու գերբնական ոյժ ուղարկէ մեզի, որպէսզի տոկանք: Նաթալին եւ Յակոբը այլեւս չափահաս են, բայց հօր մը ներկայութիւնը անփոխարինելի է, ո՛չ խրատներ, ո՛չ ցաւակցական խօսքեր կրնան անոնց վիշտը ամոքել:

Չողը թէթեւ գայ վրադ, ոսկորներդ թող հանգչին անորորութեան մէջ:

Սայրի Թի.Ֆենկեան

ՎԱՅԵՆ՝ ՅԱԲՏԱՅԵԱԼԸ, ԴԱՐԿԵՇՏԸ, ՆՈՒՐԵԱԼԸ....

Որքան ալ որ Սուրիոյ դաժան պատերազմը հաշտեցուցած էր մեզ մահուան գաղափարին հետ եւ դարձուցած նուազ զգացական, սակայն մեր սիրելի ընկերոջ Վահէ Թարխանեանի անվերադարձ մեկնումը այս աշխարհէն նոր ու խոր կսկիծ մը յառաջացուց մեր հոգիներէն ներս:

Քառասուն օրեր անցան այն թուականէն, երբ լռելեան, շիջող մոմի մը նման Վահէին սիրտը դադարեցաւ բաբախելէ, եւ ան լուռ, անմեղ մանուկի մը նման բաժնուեցաւ իր հարազատներէն, ընկերներէն, բարեկամներէն, անմխիթար ձգելով իր շրջապատը՝ բոլոր անոնց, որոնք ճանչցած էին զինք միութենական կամ ազգային ծառայութեան ընդմէջէն:

Վահէն՝ հաւատացեալը, պարկեշտը, նուիրեալը: Բարեմասնութիւններ, որոնք ամբարուած էին իր երկրէն մէջ եւ դարձած կեանքին ուղեկիշը: Երկնաւոր պարգեւ մըն էր արդեօ՞ք, կամ իր ծնողքէն, ընտանիքէն ժառանգ մնացած անկորնչելի հարստութիւն մը. թերեւս երկուքն ալ: Յաւատքով, երկիւղածութեամբ կը կատարէր իր պարտականութիւնը որպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղական: Դարկեշտ ու յարգալից էր բոլորին հանդէպ: Կեանքին վերջին օրերուն իսկ չթերացաւ իր ստանձնած պարտականութիւններուն մէջ: Մնաց պատնէշի վրայ, որպէս արթուն պահակը իր այնքան սիրելի եկեղեցւոյ եւ ազգային կառոյցներուն, Նոր գիւղին... Ան ֆիզիքապէս բաժնուեցաւ բոլորէն, ետին ձգելով բարի անուն մը ամբողջական հաւատքով, պարկեշտութեամբ եւ նուիրումով յատկանշուած:

Քրիստոնեական մեր ըմբռնումներով կը հաւատանք, որ հանդերձեալ կեանք մը կայ յաւիտենական, ուր քիչեր կ'արժանանան երկինքի արքայութեան մէջ անմահութեան: Կ'աղօթենք, որ Վահէն արդարօրէն տեղ գտնէ հոն եւ արդարներուն կողքին դրախտի բնակիչ դառնայ:

Սիրելի՛ Վահէ, կողակիցդ, գաւակներդ, հարազատներդ անշուշտ լաւ գիտեն բարեմասնութիւններդ, պիտի շարունակեն քալել քու ուղիէդ: Դուն առ յաւետ պիտի մնաս մեր բոլորին յիշողութեան մէջ եւ այդ պիտի ըլլայ քու աշխատանքիդ վարձատրութիւնը ու մեր բոլորին մխիթարութիւնը:

Չողը թէթեւ գայ վրադ: Յանգիստ ննջէ, բարի՛ ընկեր:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղականութիւն

ՕՐԱԳԻՐԻՍ ԱՌԱՋԻՆ ԷՋՐ



Սարին Չայրապետեան

1 Յունուար 2018

2017-ը իր 365 օրերով ու 12 ամիսներով անցեալ մը դարձած է արդէն եւ դէմս պարզած է Նոր մեկնակէտ, Նոր սկիզբ:

Կաղանդը միայն ուրախանալու օր չէ, զարմանալիորեն ան նաեւ յուզումի անյաղթահարելի պահեր ապրիլ կու տայ մեզի: Ո՞վ պահ մը չի յուզուիր, Նոր հանգրուանի մը սեմին կանգնած ըլլալու մեղամաղձոտ երկվայրկեան մը չ'ապրիր՝ ամենէն ուրախ ժամերուն իսկ: Այդ խորհրդողաւորութեան ազդեցութեան տակ վերցուցի գրիչս եւ Կաղանդ Պա-

կեղծութիւն» եւ «յարգանք» իմ ու բոլորին անունով, բայց ինչո՞ւ ընտրեցի այս երեք մաղթանքները:

Եթէ պահ մը միասին մտածենք, ձեր ուշադրութիւնն ալ պիտի գրաւէ տօգոյն իրականութիւն մը, որ անցնող տարիներուն հետ, աշխարհին մէջ, մեր մէջ հետզհետէ կը նուագին նաեւ սերը, անկեղծութիւնը եւ յարգանքը:

Մերը, ըլլալով առաքիլութիւններուն գլխաւորը, դժբախտաբար դարձած է՝ շահախնդրութեան առարկայ: Մարդիկ սկսած են սիրել իրենց անձերը, զիրենց սիրողները



պուկէն նուէր ստացած օրատետրին առաջին մաքուր թերթիկը բացի, որպէսզի գրեմ Նոր Տարուան խորամտութիւններս ու մաղթանքներս:

Յանկարծ գրիչս դադարեցաւ գրելէ. քանի մը ապարդիւն փորձէ ետք ստիպուեցայ փոխել գայն: Նոր գրիչի գործածութիւնը մէջս արթնցուց Նոր ապրում մը եւս եւ զիս մղեց մտածելու ու գրելու Նոր բան մը:

Երեւակայութեամբս գացի մանկութեանս օրերը, յիշեցի մօրս խօսքը որ կ'ըսէր. «Կըքերդ բաց-գոցէ եւ ժամանակը կը թռի կ'երթայ, իսկ դուն ոչ մէկ բան կը զգաս», ու ես կատակելով կը պատասխանէի. «Ահա աչքերս թարթեցի, ո՛րք է բան չփոխուեցաւ»: Այսօր, սակայն, այս խորհմաստ խօսքը մասովոր կերպով կը ճնշեր ու իր իմաստը զգալի կը դարձնէր արդէն:

«Տարիները թելեր առին ու թռան» եւ աշխարհը ու իր մէջ ապրող մարդկութիւնը, անոնց մէջ ըլլալով նաեւ ես՝ շատ յաճախ իրարու մաղթեցիք բարի տարիներ, ցանկացիւք լաւ օրեր եւ յուսացիւք ամենալաւն ու բարին, սակայն կարեւորութիւն տալով միայն արտաքին երեւոյթներուն, ձեւականութեան, արդ ու զարդին ու տոնական մթնոլորտին: Մոռցանք գլխաւորը՝ սրտի ու մտքի թարմացումը: Երբեմն դժգոհեցանք երկրին անբարեկամատ պայմաններէն, բայց չդժգոհեցանք երբեք մեր մտքին ու հոգիին աղքատութենէն:

Այս մտքերով լուսաւորուած օրագիրիս առաջին էջին վրայ ուզեցի գրել մաղթանքներս՝ «սեր», «ան-

ու սկսած են գիրար յիշել միայն ակընկալութիւններու եւ շահերու համար: Անկեղծութեան փոխարէն, մարդիկ իրենց իսկական ինքնութիւնը ծածկելով դիմակներ սկսած են կրել... աներեւոյթ, անհարազատ, գունաւոր եւ թունաւոր դիմակներ, հարկ եղած պարագային օգտագործելի դիմակներ:

Իսկ յարգանքը... ո՞ր կրնանք գտնել գայն, երբ կը տեսնենք լքուած ծերունիներ, ծնողական անտեսուած խրատներ, դպրոցներու մէջ կարեւորութեան չարժանացած ուսուցիչներու խորհուրդներ եւ այլն...:

Նոր Տարուան սեմին այնքան կարիք գացի այս երեք մարդկային մոռցուած արժեքները օրագիրիս առաջին էջին վրայ դրողմէն լու, որովհետեւ շրջապատս զգաստութեան իրաւիքելով ու անկեղծ երկու խօսքով էր, որ հաւանաբար Նոր Տարին պիտի ստանար իսկական Նոր իմաստ եւ օրագիրներուս յաջորդ էջերը պիտի հարստանային արդիւնաւետ ու իրավիճակներ փոխող խօսքերով ու տպաւորութիւններով:

Բանաստեղծին՝ Գեորգ Էմիլի խօսքով կը փակեմ գրութիւնս եւ սրտանց կը ցանկամ, որ ձեր բոլոր բարի մաղթանքները իրականանան:

«Մեզանկը Ե կախուած, որ այս եկող Նոր Տարին իսկապէս Նոր լի-նի, Նա Նոր Է լինում մեր Նոր գործերով ու խոհերով, ծրագիրներով եւ արարքներով, մեզանկը Ե կախուած, որ Նա լաւ լինի, Նա լաւ Է լինում մեր ձգտումներով ու արարքներով»:

## ԹԵԻՎԻՈՐ ԽՕՍՔԵՐ ԵՒ ՂԱՐՁՈՒՄԾՔՆԵՐ (Ե.)

Արմենակ Եղիայեան

### \*\*\*Յուդայի համբոյր

Վերջին ընթրիքին Յիսուս ըսաւ աշակերտներուն, թէ իրենցմէ մէկը պիտի մատնէ զինք: Աշակերտները, մասնաւորաբար Յովհաննէսը, գայթակղեցան եւ հարցապնդեցին Վարդապետը մատնիչի անձին մասին՝ առանց բան մը իմանալու: Եւ երբ Յիսուս Գերսեմանիի պարտեզը բարձրացաւ աղօթելու ու խորհրդաձեւելու, այնտեղ ուղղուեցան նաեւ հռոմէացի զինուորները՝ առաջնորդութեամբ Յուդայի, որ իսկական մատնիչն էր. ան, երեսուն արծաթի փոխարէն, խոստացած էր մատնել Յիսուսը՝ համբոյրով մը զինուորներուն մատնանշելով անոր ինքնութիւնը: Եւ առ այս՝ ան իրօք ալ մօտեցաւ ու համբուրեց Քրիստոսը, եւ զինուորները իսկոյն կալանեցին զայն:

Այս դրուագէն մնացած է «յուդայի համբոյր» դարձուածքը, որ կը խորհրդանշէ հարազատի հանդէպ որեւէ մատնողական, դաւաճանական արարք:

Ուշադրութիւն. պետք է կայ գըլխագրելու դարձուածքին առաջին եզրը:

### \*\*\*Պիլոստեան յաղթանակ

Պիլոստ (319-272) նոյն զօրավար մըն էր, որ ծնած էր Եպիբրեի մէջ՝ արեւմտեան Յունաստան, ուր եւ թագաւորեց 295-էն մինչեւ մահը: Ան ինքզինք կը դաւանէր Կրիստոսի մէկ շառավիղը: Իբրեւ փայլուն զօրակաւի՝ Պիլոստարքոս իր «Չուգակշիռներ»-ուն մէջ երկար գլուխ մը յատկացուցած է անոր: Իսկ Անկիբալ զինք կը դաւանէր պատմութեան երկու մեծագոյն զօրավարներէն մէկը՝ Աղեքսանտրի հետ:

Պիլոստ մեծ փառամուլ մըն էր միաժամանակ, եւ իր յաղթանակներէն ոչ մէկը գոհացուց ու կասեցուց զինք, այս պատճառով ալ անոնք մաշեցուցին Եւ իր գանձը, Եւ բանակները, այլ հարց թէ այս բոլորին մէջ ան առիթ գտաւ իննգ անգամ ամուսնանալու: Ան կռուած է մասնաւորաբար հռոմայեցիներու դէմ, բայց նաեւ կարթագէնացիներու եւ... յոյներու: Յատուկ կը յիշատակուին իր Յերակլէայի (279) եւ Ասկուլամի (280) յաղթանակները, որոնք սակայն շատ արիւնալի ու կորստաբեր եղան Պիլոստի համար: Եւ երբ ծանօթներ ու բարեկամներ կը շնորհաւորէին զինք նման յաղթանակի համար, Պիլոստ դառնութեամբ ըսաւ. «Եթէ այսպիսի ուրիշ յաղթանակ մըն ալ տանիմ, բանակս լման կ'ոչնչանայ»:

Ան սպաննուեցաւ Արգոսի մէջ՝ յոյներու դէմ մղուած պատերազմի

մը ընթացքին:

Պիլոստ կը խորհրդանշէ անյազ ու փառատենչ զինուորականը, որ չի գիտեր սանձ մը դնել իր փառամոլութեան: Իրմէ կը մնայ «պիլոստեան յաղթանակ» դարձուածքը, որ կը նշանակէ շատ սուղ վճարուած յաղթանակ, որուն պարգեւած փառքը համապատասխան է յանձն առնուած զոհողութեան:

### \*\*\*Պրոկրուստեան մահիճ

Յունաստանի ամայի ճամբաներէն մէկուն վրայ կ'ապրէր անուղղայ աւագակ մը՝ Դամաստե Պրոկրուստեան, որ իր տան մէջ հաստատած էր յատուկ մահճակալ մը: Ան կը բռներ անցորդները ու գանոնք կը պառկեցներ այդ մահճակալին վրայ. եթէ պառկողին հասակը աւելի երկար ըլլար մահճակալէն, ապա կը կտրէր անոր ոտքերը ու մարդուն հասակը կը հաւասարեցներ մահճակալի երկայնքին. իսկ եթէ պառկողը աւելի կարճ էր մահճակալէն, ապա անոր ոտքերէն կը քաշէր մասնաւոր սարքով մը, որպէսզի հասակը նմանապէս հաւասարեցներ մահճակալին:

Մինչեւ որ Թեսէլոսը՝ դիցաբանական ուրիշ հերոս մը, յաջողեցաւ այդ նոյն պատիժին ենթարկել Պրոկրուստեան աւագակը եւ ազատեց անցորդները այդ սարսափելի փորձանքէն: Մնաց սակայն «Պրոկրուստեան մահիճ» դարձուածքը, որ ապրեցաւ այնուհետեւ:

Ան կը խորհրդանշէ տուեալները, փաստերը արուեստական ու բռնազօր սիկ չափանիշներու յարմարեցումը ձգտող մարդու ընթացքը, այսինքն՝ այնպիսիներուն, որոնք ոչ թէ իրենք կ'ենթարկուին իրողական փաստերու թելադրանքին, այլ կը փորձեն փաստերը ենթարկել իրենց մտածողութեան ու տրամադրութեան:

### \*\*\*Ռուբիկոնը անցնիլ

Քրիստոսէ առաջ՝ 49 թուին, Յուլիոս Կեսար, Գաղիան վերջնականապէս իրեն ենթարկելէ ետք, պատրաստուեցաւ վերադառնալու Յռոմ. ան թաքուն կը սնուցէր կայսերական նպատակներ: Իտալական թերակղզի մտնելու համար՝ ան պետք է հիւսիսէն հատեր Ռուբիկոն գետը եւ ըստ ընկալեալ սովորութեան՝ պետք է նախ զինաթափէր ու ցրուէր իր բանակը: Յռոմի ծերակոյտին հարկաւորաբար յաշտական քայլը կը միտէր զօրավարներու մէջ փարատելու պետական հարուած կատարելու ամեն ախորժակ:

Յուլիոս Կեսար ջարգեց այդ որոշումը. ան զինեալ լեզեռնով մը

անարգել անցաւ Ռուբիկոնը ու քալեց Յռոմի վրայ, - որ այն ատեն հանրապետութիւն մըն էր, - որովհետեւ, ինչպէս ըսինք, ան տարուած էր կայսերական երազներով: Այնպէս ալ ծայր առաւ քաղաքացիական պատերազմ մը՝ ընդմէջ Կեսարի եւ անոր հանրապետական հակառակորդներուն: Կեսար յաջողեցաւ յաղթել ու դառնալ մենակալ (dictator), տիրակալ (imperator), սակայն չհասցուց կայսր դառնալ ու կրել կայսերական թագը, որովհետեւ վրայ տուաւ իր կեանքը. ան 44 թուին Զաւ., Մարտի 14-ին, սպաննուեցաւ Բրուտոսի ու անոր համախոհ դաւադիր ազգայնականներու ձեռքով:

Ասկէ յառաջացած է «Ռուբիկոնը անցնիլ» դարձուածքը, որ կը նշանակէ՝ օրէնքով դրուած ու հանրօրէն յարգուած արգելքի մը անտեսումը, որ կրնայ ընդհուպ մինչեւ մահ տանիլ:

\*\*\*

Նոյն ծիրէն ներս Յուլիոս Կեսարին կը վերագրուի այլ խօսք մը, որ նոյնպէս դարձուածքի կարգ անցած է. երբ Կեսար իր անմիջական համախոհներուն յայտնեց Ռուբիկոնը գինուած անցնելու որոշումը, այս վերջինները իրեն նկատել տուին այն ծանր հետեւանքները, որոնք կրնար ենթարկուիլ ան. Կեսար պատասխանեց. «Վիճակը ծրուած է» (alea jacta est)<sup>1</sup>:

Այս դարձուածքը հոմանիշ է անդամալի ու ճակատագրական որոշումի:

Դարձեալ նոյն ծիրէն ներս՝ համաշխարհային դարձուածքի համբաւ կը վայելէ «Դո՛ն ալ, Բրուտոս»-ը, որ եղաւ Կեսարի վերջին խօսքը՝ դաւադիրներու հարուածներուն տակ:

Բրուտոսը Կեսարին դէմ դաւարող խմբակի ղեկավարներէն էր: Արդ, ան սիրելին էր Կեսարին, նոյնիսկ կ'ըսուի, թէ Կեսար որդեգրած էր Բրուտոսը, որովհետեւ իր կինը ստեր էր: Ուրեմն ծերակոյտէն հազիւ ելած էր Կեսար, երբ դաւադիր խմբակի անդամները մէկ առ մէկ մօտեցան ու դաշունահարեցին զինք. Կեսար տակաւին ոտքի էր, երբ վերջին պահուն տեսաւ Բրուտոսին մօտենալը՝ մերկ դաշոյնը ձեռքին: Ահա այս առիթով էր որ ան զարմացած տուաւ իր հարցումը՝ «Դո՛ն ալ, Բրուտո՛ս», - եւ հարուածը ստանալէ ետք ու տապալելէ առաջ հագիւ կրցաւ արտասանել. «Ուրեմն ինկի՛ր, Կեսար՛»:

Դո՛ն ալ, Բրուտո՛ս-ը կը խորհրդանշէ բոլորովին անակնկալ, - եւ անշուշտ բացասական, - կամ վերաբերումը մէկուն, որմէ չէր սպասուէր նման բան:

### \*\*\*Սիզիփեան աշխատանք

Իր դաժանութեամբ, վայրագութեամբ ու աւագակաբարոյ վարքով հանրածանօթ՝ Կորնթոսի Սիզիփոս թագաւորը մահէն ետք, դժոխ-

քի մէջ, դատապարտուեցաւ յաւիտենապէս դէպի լերան գագաթը իրելով բարձրացնելու ծանր ժայռ մը, որ, ամէն անգամ տեղ հասած, ետ վար կը գլորէր:

Դարձուածքը կը խորհրդանշէ տաժանակիր, անվերջ, յուսահատեցնող ու ապարդիւն աշխատանքը:

Տեսնել նաեւ «դանայեան տակաւ»-ը:

Ուշադրութիւն. պետք է գըլխագրել «սիզիփեան» եզրը:

### \*\*\*Սպանական դղեակ

Արաբները, աւելի ճիշդը՝ մուսուլմանները, Սպանիան գրաւեցին 711 թուին ու այնտեղ իշխեցին մինչեւ 1492 թուականը: Բնիկները, սպառնելով զանոնք դուրս քշելու իրենց բոլոր միջոցները ու չկարենալով արգիլել անոնց կեցութիւնը, քանդեցին իրենց բոլոր դղեակները եւ այլ կարգի հաստատուն շինութիւնները, որպէսզի մարերը չկարենան հաստատուիլ ու ապահովութիւն ունենալ: Այս միջոցառումը, ենթադրելի է, այնքան ալ արդիւնաւետ չէ եղած, քանի մարերը յաջողեցան այնքան երկար մնալ Սպանիոյ մէջ, որ քիչ կը մնար անցնելի Պիրենեան լեռնաշղթան ալ ու նուաճեին Ֆրանսան, եթէ Շառլ Մարտել թագաւորը պարտութեան չմատնէր զանոնք 732-ին:

Յամենայն դէպս մնաց սպանական «դղեակ դարձուածքը», որ կը բնորոշէ անիրական, անկարելի եւ անիրագործելի իղծ մը, ցանկութիւն մը, ծրագիր մը:

«Սպանական դղեակ կառուցել» իր կարգին կը նշանակէ մշակել այնպիսի ծրագրեր, որոնք երբեք պիտի չիրականանան:

### \*\*\*Վերջին մոհիկան

Մոհիկանները հիւսիսամերիկեան բնիկ ցեղախումբ մըն էին. միւս բնիկներուն պէս, իրենք եւս երկար պայքարեցան եկուոր սպիտակներուն դէմ եւ անոնց պէս ալ ի վերջոյ պարտուեցան ու ենթարկուեցան Նոր Աշխարհի օրէնքներուն: Ամերիկացի վիպասան մը՝ Ֆենիմոր Բուփըր, անցած դարուն գրեց վէպ մը, որ կը կոչուի «Վերջին մոհիկանը» (The Last mohican) եւ որուն մէջ կը նկարագրէ այս ցեղախումբին պատկանող վերջին կարմրամորթը, որ զէն ի ձեռին եւ առանց յուսահատելու պայքարեցաւ յանուն հայրենի հողին, իր ցեղին ինքնութեան ու ազատութեան. այդ պայքարին մէջ ալ զոհուեցաւ:

Այս վէպը այնքան գնահատուեցաւ, որ հետզհետէ թարգմանուեցաւ բազմաթիւ օտար լեզուներու, իրատարակուեցաւ մեծ տպագրանակներով ու յափշտակուեցաւ ընթերցողներէն: Անոր խորագիրն ալ դարձաւ համաշխարհային դարձուածք մը, որով կը բնորոշուի վսեմ ու նուիրական գաղափարի մը համար աննահանջ, բայց եւ առանձին պայքարողը, որ այլեւս հետեւորդ-

Շար. 12 14

<sup>1</sup>Այստեղ կը մէջբերենք սոյն դարձուածքին մէկ շատ գեղեցիկ կիրարկութիւնը, որ կը գտնուի Գ. Չոհրայի օրագրութեան մէջ. «Այն ոյժը, որ գործերը մինչեւ հոս բերաւ, ծովային եւ ցամաքային ոյժերը գերմանացոց յանձնեց, նեղուցները, բերդերը, փոխադրութիւնը, պարենաւորումը՝ ամբողջ օսմանեան կեանքը յանձնեց գերմաններուն, - չի կրնար այլեւս նահանջել. Alea jacta est» (Օրագրութիւն, 30 Գլուխ. 1914): Ան կ'ակնարկէ այն շատ մեծ գրաւին, որ իթթիհատականները դրին Գերմանիոյ հետ զինակցութեան վրայ Ա. համաշխարհային պատերազմի նախօրեակին:

## Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Ք



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 232)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

### Հորիզոնական

- 1- Իրարմէ հեռու բնակող: Համբոյր:
- 2- Տառի մը անունը: Կեանքի հեղուկ:
- 3- Վայրի վարդենի: Առարկայ:
- 4- Պատերազմի դաշտ: Հակառակ՝ ժամանում:
- 5- Հակառակ՝ ցուցական դերանուն: Հակառակ՝ արդի:
- 6- Վահան Փափագեանի ծածկանունը: Աւտորալիոյ քաղաքներէն:
- 7- Հակառակ՝ տարածքի միաւոր: Ծափոնական թատրոն: Սիամանթոյի ծնընդավայրը:

### ՝Վերայնայն

- 8- Մագ: Հակառակ՝ պիսակ: Չուարթ:
- 9- Տապալի: Գոյութիւն ունէր: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 10- Էական բայ: Հակառակին համեմ: Հակառակ՝ Էական բայ:
- 11- Կրկնուած ձայնաւորներ: Մարգարէ մը:
- 12- Կոճակ անցնելու բացուածք: Գուարթ:

### Ուղղահայեաց

- 1- Զահանաս երբ Ս. Աւետարանը ձեռքին բեմէն կ'իջնէ, դպիրները 3 անգամ կ'երգեն՝ «Եղիցի անուն .....» յայսմիտէ միկչէ յախտեան»:
- 2- Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք դառնալու թուականը: Հայկական մականուններու վերջականը:
- 3- Հակառակ՝ պատրաստ: Կրկնուած բաղաձայններ: Տարի:
- 4- Հայ նահապետ: Յարաբերական դերանուն: Իրերայաջորդ տառեր:
- 5- Զա. 6-2-րդ դարերուն մերձսեւծովեան ապրած ցեղախումբ:
- 6- «Պայքար» եւ «Մահ» վեպերու հեղինակը: Ծարժուն մեքենայի ուղղութիւն տուող գործիք:
- 7- Արմէն Անուշի երկը «.....» ճանապարհով: Հակառակ՝ գոյութիւն ունին:
- 8- Հակառակ՝ ամենապայծառ աստղը արեգակին մօտ: Հակառակ՝ Դասախօս:
- 9- Հակառակ՝ ցերեկ օր: Հակառակ՝ օր:
- 10- Բաղաձայն տառեր: Անձանօթ: Թունաւոր օձ:
- 11- Փոքրացնող մասնիկ: Հաց:
- 12- Խմբագիր եւ քաղաքական գործիչ, «Յառաջ» եւ «Ալիք» թերթերը իրմբ բարձրած է Աւետիս Ահարոնեանին եւ Եղիշէ Թովչեանին հետ միասին:

## ՀՄԸՄ...

Սկիզբ՝ էջ 8

ՀՄԸՄ-ի ընդհանուր ժողովին կը մասնակցին Գրիգոր Յակոբեան, Տիգրան Խոյեան, Լեւոն Յակոբեան, Գառլօ Շահինեան, Հայկ Ծիգմեճեան, Վահրամ Փափագեան, Ժիրայր Խորասանճեան իսկ ժողովէն ակամայ կը բացակայէր գրագետ՝ Հ. Ծ. Սիրունի: Հիմնադիր անդամներով կը կազմուի ՀՄԸՄ-ի առաջին վարչութիւնը եւ ՀՄԸՄ-ը իբրեւ հայ մարզական միակ կազմակերպութիւն 16 Դեկտեմբեր 1918-ին կը վաւերացուի Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ:

ՀՄԸՄ-ը հիմնուեցաւ մեր պատմութեան ամենէն ողբերգական ու բախտորոշ մէկ շրջանին, այսինքն՝ ցեղասպանութեան վաղորդայինին,

երբ ամբողջ արեւմտահայութիւնը բնաջնջուած էր: Վերականգնումի եւ վերակենդանացման ազգային դարաւոր ոգին էր, որ կ'արթննար ու մարմին կ'առնէր քանի մը գաղափարապաշտ երիտասարդներու տեսիլքով:

ՀՄԸՄ-ի հիմնադիրները թերեւս չէին իսկ երեւակայէր, թէ որքան փոքր կարար շարժումի մը ծնունդ կուտային՝ հրապարակներով իրենց նշանաւոր «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանը: Եւ իր հիմնադրութեան երկրորդ օրն իսկ, ՀՄԸՄ նետուեցաւ որբանոցներու գեղեցիկ մէջ եւ մեր կորսուած, անգոյն ու անժպիտ անտերներուն սրտին մէջ արթնցուց վերապրելու ուխտը մեր ժողովուրդին, յոյս ներշնչեց անոնց եւ եղաւ գորովագութեամբ եղբայր, անշահախնդիր ծնողը:

Պատրաստեց Մարինա Զիւլքրոջեան-Պողիկեան

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 232)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		3		2				
7	1			5			8	
				7	9		3	4
			7					3
							3	1
5				9	1			4
2	6							
		6		7	4			
	9	4		6			7	3
								8

### ՊԱՅՈՒՎ ՔԱՌ (ՄՊ 3)

Ստորեւ նշուած ծառերու անունները ջնջելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 9 տառերէ բաղկացած ծառ մըն է, որուն տուած պտուղով նշանաւոր է Հալէպը:

n	u	o	u	h	n	d	a	n	p
p	i	u	h	h	l	z	t	n	p
u	u	n	u	u	u	p	t	n	t
p	u	p	t	h	h	u	p	n	n
t	l	u	t	n	n	l	t	t	h
h	n	l	u	h	h	t	i	n	h
u	p	u	u	i	t	n	h	h	n
h	t	h	t	i	n	h	t	n	t
p	n	h	n	i	q	t	n	h	q
h	h	t	u	n	d	t	n	h	p

թգենի - արմաւենի - կաղնի - եղեւնի - թթենի - ընկուզենի - ուռենի - սօսի - տանձենի - սալորենի - բարտի - բալենի - նոնենի - նշենի - դափնի - ծառ - տերեւ - բալ

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 231)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 231)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	h	t	p	u	n	u	t	p	q	t	p	
2	u	p	u	p	h	z			u		t	
3	h		p	u		n	u	u	p	u	t	
4	u		p	u	h	z	t	l	u	q	j	u
5	h	i	h	z		u	p		u	p	h	
6	u		z	u		p	h	u	h		u	
7	h	p		u	h	u	p		p	n	h	
8	p	o			n	u	h	i	n		h	
9	h		p	n		u	h	u		u		
10	u	u	u	q	n	i	t			z	t	
11	u	h	u	n	h	u	p	u	g	t	u	h
12	h	t		u	h		q	o	h		u	

4	8	1	5	6	7	2	9	3
9	3	5	8	4	2	1	7	6
7	2	6	1	9	3	8	5	4
6	5	7	9	1	8	3	4	2
8	4	2	3	7	6	9	1	5
1	9	3	4	2	5	7	6	8
2	1	9	6	8	4	5	3	7
5	6	8	7	3	9	4	2	1
3	7	4	2	5	1	6	8	9

ՊԱՅՈՒՎ ՔԱՌ (ՄՊ 2)

Պահուած բառը՝ Չեռնադաշնակ

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**ԽՈՅ**  
Գալիք օրերը արդիւնաբեր պիտի ըլլան: Հմտութիւն ցուցաբերելու համար ջանք մի՛ խնայէք: Նոր առիթ մը պիտի ընձեռուի ձեզի:



**ՅՈՒԼ**  
Գալիք երկու օրերուն ընթացքին ձեր կողքին պիտի ըլլան մարդիկ, որոնք պիտի ուրախացնեն ձեզ: Յարմար ժամանակն է միանալու խումբի մը: Լայն ժողովրդականութիւն ձեռք պիտի ձգէք:



**ԵՐԿՈՒՐԵԱԿ**  
Լուսինը կը քաջալերէ ձեզ փորձառութիւններ փոխանակելու: Պտոյտ մը պիտի ունենաք: Ձեր տրամադրութիւնները մեծապէս պիտի փոխուին: Դրական շրջան մըն է:



**ԽԵՅՉԵՏԻՆ**  
Յաջողելու համար պետք է իրապաշտ եւ տրամաբանական քայլեր առնէք: Ձեր գրոյցները թող ըլլան հանդարտ ու հաստատ:



**ԱՌԻԾ**  
Ձեզի հետ յարաբերիլն ու հասկնալը դժուարացած է: Ամսուան դժուար օրերն մէկն է: Ընտանեկան լարուած վիճակ մը պիտի տիրէ, մի՛ քննադատէք անմիջապէս:



**ԿՈՅՍ**  
Ժամանակ կորսնցնելու առիթ չունիք: Նկատի պետք է առնէք ձեր առողջական եւ առօրեայ պայմանները:



**ԿՇԻՈՔ**  
Շատ ուրախ պահեր պիտի ունենաք: Դրական շրջան մըն է ձեր միտքերը սեղանին դնելու եւ քննարկելու: Ամսուան լաւագոյն օրերն մէկն է:



**ԿԱՐԻՃ**  
Վիրաւորական եւ սուր խօսքեր մի՛ ուղղէք այս օրերուն: Պիտի ծագին անձնական կամ ընտանեկան խնդիրներ, որոնք ձեզ խուճապի պիտի մատնեն:



**ԱՂԵՂԱՊՈՐ**  
Համոզելու բացառիկ կարողութիւն ունիք: Արտայայտեցէք ձեր կարծիքը ամենայն ազատութեամբ ու յանդգնութեամբ:



**ԱՅՏԵՂԶԻՐ**  
Գործնական եւ շինիչ միտքեր պիտի ունենաք: Նիւթական եւ բարոյական քայլեր պիտի առնէք: Հարցի մը լուծումը ձեզ պիտի ուրախացնէ:



**ՋՐՅԱՆ**  
Այս օրերուն ճամբան բաց է ձեր դիմաց: Կարելի խնդիրներու շուրջ քննարկումներ պիտի ունենաք: Ձեզ ուրախացնող լուր մը պիտի ստանաք:




**ՋՈՒԿ**  
Չափաւորական ձեր կեցածքին վրայ մնացէք: Դրական շրջան մըն է: Աշխատեցէք հանգիստ եւ ապահով միջավայրի մէջ մնալ:



## ԻՆՉՊԻՍԻ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԿԸ ՀԱՄԱՐՈՒՄ ՈՒՂԵՂԻՆ ՁԱԽ ԿԻՍԱԳՈՒՆԴԸ

Մեր ուղեղը պետք է տեսաբար մարգել: Անբաղկացած է երկու մասերէ, իւրաքանչիւրը գանազան գործողութիւններու պատասխանատուն կը համարուի: Հասկնալու համար, թէ ինչպիսի՞ վարժութիւններ պետք է կատարենք ուղեղը մարգելու համար, նախ պետք է գիտնանք, թէ ինչ գործողութիւններու պատասխանատու կը համարուի մեր ուղեղին ձախ կիսագունդը, օրինակ:



Ձախ կիսագունդին մէջ կը գարգանայ մեր տրամաբանական մտածողութիւնը: Ձախ կիսագունդը տեղեկութեան վերլուծումին ու մշակումին պատասխանատու է:

Ձախ կիսագունդը անելի գարգացած կ'ըլլայ այն մարդոց մօտ, որոնք իրենց մտքին մէջ երկարատեւ կը պահեն անուններ, տեղեկութիւններ եւ թիւեր: Ձախ կիսագունդը կը կառավարէ խօսքի հասարակչութիւնը եւ կ'օգնէ ուսումնասիրելու օտար լեզուներ: Հետաքրքրականը այն է, որ ան կը կառավարէ մարմինին աջ հատուածը: Ուղեղի ձախ կիսագունդին հրահանգով

կը ղեկավարուին մեր շարժումները:

Անհրաժեշտ է որ մեր ուղեղին երկու կիսագունդերուն աշխատանքը ներդաշնակ ըլլայ, սակայն անոնցմէ մէկը տեսաբար կը գերակշռէ միւսը: Կարելի է ըսել, որ յաջող մարդիկ կը ղեկավարուին այս կիսագունդով: Անոնք նպատակաւոր կը քննարկեն իր ցածրագրութեան արեւի բանականութեամբ կ'առաջնորդուին: Այս մէկը կ'օգնէ, որ անոնք անվախ ու ինքնավստահ յառաջանան իրենց գործին ու կեանքին մէջ:

### Քանի մը խորհուրդ

- Կառավարեցէք ձեր խօսքը եւ եթէ նկատէք, որ բառերը անբաւարար են գեղեցիկ մտքեր կազմելու համար, ընթերցանութեամբ զբաղեցէք: դասական գեղարուեստական գրականութիւնը խօսքի գարգացումին կը նպաստէ:

- Մտաւոր ունակութիւններու գարգացումին կը նպաստեն գրասանքներն ու մարզանքը: Թարմ ու թթուածինով հարուստ օդը դրական ներգործութիւն կ'ունենայ մեր օրկակիզման վրայ եւ կ'օգնէ, որ մեր աշխատանքը արդիւնաւետ դառնայ:

- Չբաղուեցէք լեզուներու ուսումնասիրութեամբ:

- Փոխեցէք ձեր ապրելակերպը եւ սովորական դարձած ամէնօրեայ աշխատանքները այլ ձեւերով փորձեցէք կատարել:

- Եթէ ձեր աշխատանքը նախապէս ծրագրելու սովորութիւն չունիք, ապա ժամանակն է որ այսուհետեւ սկսիք ծրագրաւորման: Գրի առէք ձեր միտքերը եւ փափաքները, նպատակներ ճշդեցէք, գանձեցէք իրականացնելու համար ժամկետներ սահմանեցէք:

## Գիտե՞ք ԹԵ...

*Ուղեղը բարդ գործարան մըն է եւ ան երբեմն կը սիրէ մեզի հետ կատակներ ընել... Փորձենք թափանցել անոր գաղտնիքներուն մէջ:*

### Տեսողական պատրանքներ

Տեսողական պատրանքը պատկեր մըն է, գոր ուղեղը լաւ չի մեկնաբաներ: Երբ մենք կը նայինք նման պատկերի մը կամ տարօրինակ գծագրութեան մը, մեր ուղեղը կը շփոթի եւ իրականութենէն տարբեր տպաւորութիւն մը կու տայ: Անոնք կը կոչուին «ըմբռնումի սխալներ»: Ամէն մարդ նոյն սխալները չի կատարեր. կարգ մը անձեր նոյն նկարին նայելով, նոյն պատկերը պիտի չտեսնեն, հետեւաբար անոնք պիտի ունենան տեսողական տարբեր պատրանքներ:

### Մոռացում

Շատերուն պատահած է յանկարծակիօրէն մոռացումի վայրկեան մը ապրիլ: Ասիկա բնական է: Մեր ուղեղը կազմուած է յատուկ ձեւով մը, եւ ան երբեմն կարգ մը տեղեկութիւններ դուրս կը ձգէ շատ ջնարաբեղմունքով համար: Երեւակայեցէք, որ ուղեղը դարակ մըն է, եթէ մենք այդ դարակին մէջ շատ բաներ դնենք, ան չի գոցուի եւ հետեւաբար լաւ չի բանիր: Յաճախ մեր ուղեղը կը ջնջէ այն յիշատակները, որոնք լաւ չեն արձանագրուած: Օրինակի համար եթէ դու ղատերդ լաւ վերաբար չ'ընես, դու ղատը դժուար միտքը պիտի պահես: Այդ տեղեկութիւնները լաւ արձանագրելու համար, պետք է լաւ պայմաններու մէջ գտնուի, պետք է լաւ քնացած ըլլալ եւ առողջ բաներ կերած ըլլալ:

### Աջիկ կամ ձախիկ

Մեր ուղեղին աջ կիսագունդը կը ղեկավարէ մեր մարմինի ձախ կողմը, իսկ ձախ կիսագունդը՝ աջ կողմը: Առաւել, կարգ մը պաշտօններ, ինչպէս խօսակցութիւնը կամ շարժումները, վերլուծումի կ'ենթարկուին ուղեղի յատուկ մէկ բաժնին մէջ: Այս ձեւով, եթէ դու ձախիկ ես «շարժումի» այդ պաշտօնը կը սերտուի ուղեղիդ աջ բաժնին մէջ: Իսկ եթէ դու աջիկ ես, ապա գլխաւորաբար ուղեղիդ ձախ կողմին մէջ:



## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՅԱՆԴԱՐՏ...

Սկիզբ՝ էջ 9

րական կազմեն ներս ունեցայ ու այսօր ալ ունիմ արժեքաւոր գործընկերներ, որոնց հետ ամեն առտու քով քովի կու գանք՝ «այսօր ի՞նչ պիտի ընենք» ըսելով, եւ իրիկունը իրարմէ կը բաժնուինք՝ «այսօր ալ լաւ բան մը ըրինք» ըսելով: Բախտաւոր եմ գործակիցներով: Կը հաւատամ որ անոնք պիտի շարունակեն այն գործը, գոր ես ստանձնեմ եմ:

Սիրելի՛ Լեւոն, հարցումիդ պատասխանելու համար պետք է որ դարձեալ քանի մը գիրք գրեմ: Ուստի կը բաւականանամ այսքանով:

**Լ. Շ. - Եթէ անցում մը կատարենք դեպի Բ. տասնամեակ, այսինքն՝ 1977-1987 երկարող շրջանը, ես անմիջապէս կը վերսիջեմ որ ատիկա քաղաքական իմաստով դժնդակ ժամանակաշրջան մըն էր պոլիտիկայի համար: Ամբողջ համայնքը, իր ազգային-հոգեւոր իշխանութեամբ թէ ժողովուրդով, յաճախակիօրէն ապրեցաւ ծանր պահեր ու ենթակայ մնաց հոգեկան տագնապալի ճնշումներու՝ ի հետեւանք արտասահմանի մէջ թուրք դիւանագետներու դեմ շղթայազերծուած իրերայաջորդ մահափորձերու կամ վրէժխնդրական սպաննութիւններու, որոնք կը կատարուէին հայկական գաղտնի կազմակերպութիւններու կողմէ: «Մարմարա»ն, իբրեւ պոլսահայ մամուլ, ինչպիսի՞ փորձութիւններու մէջէն քալեց՝ դիմագրաւելու համար այդ անօրինակ տագնապը, որ, ճիշդն ըսելու համար, «մուրճի ու սալի միջեւ» կը դնէր զինք: Իբրեւ թրքահայ խմբագիր մը, վերոնշեալ քաղաքական վտանգաւոր երեւոյթին դիմաց՝ որո՞նք եղան ձեր «ինքնապաշտպանական» քայլերը, կամ ի՞նչ եղաւ ձեր կողմէ որդեգրուած «ռազմավարութիւն»ը:**

**Ռ. Յ. -** Անիծեալ շրջան մըն էր ատիկա: Կրնամ ըսել որ խմբագրի կեանքիս ամենէն դժուար օրերը ապրած եմ այդ շրջանին: Մահափորձերը, որոնք թուրք դիւանագետներու դեմ կը կատարուէին արտասահմանի մէջ, բնականաբար շատ դժուար վիճակ ստեղծած էին ոչ միայն մեզի նման հայ խմբագիրներու ու մտաւորականներու համար, այլ ամբողջ համայնքին համար: Զամայնքը անգամ մը եւս կ'ապրէր այս երկրին մէջ հայ ըլլալու կամ հայկական անուն կրելու դժուարութիւնը: Թեւ թուրքիոյ դեկավար դեմքերը, պատասխանատու բերանները այս խնդրին մէջ շատ զգոյշ էին տեղացի հայ ժողովուրդին դեմ թըշնամութիւն չստեղծելու համար, շարունակ կ'ըսէին որ թուրքիոյ հայ բնակչութիւնը որեւէ յանցանք չունի, թուրքիոյ հայ հայրենակիցները հաւատարիմ տարրեր են ու անոնք ալ անշուշտ գոհ չէին այդ մահափորձերէն, բայց այդ զգուշաւոր լեզուն որ քաջ կրնար հանդարտեցնել կիրքերը: Թուրքիոյ մէջ քիչ չէին հաւանաբար ծայրայեղ տարրեր, որոնք պիտի ուզէին դուրսի հայերուն նկատմամբ իրենց զգացածին վրէժը լու-

ծել տեղաբնակ անպաշտպան անմեղ հայերէ: Բարեբախտաբար, գրեթէ որեւէ լուրջ բան չպատահեցաւ այս տեսանկիւնէ: Զետաքրքրական է յիշել անմոռանալի դրուագ մը այդ օրերէն: Արթին Փէնիկ անուն տարիքոտ հայ մարդ մը, որպէս բողոք ԱՍԱԼԱ կազմակերպութեան դեմ, ինքզինքն իրկիզեց Թաքսիմի իրապարակին վրայ ու մեռաւ: Ասիկա պատահար մըն էր, որ կ'օգնէր տեղացի հայերու նկատմամբ համակրանքի տպաւորութիւն մը ստեղծելու: Բայց թուրքիոյ համար լուրջ տագնապ մը կար մէջտեղը ու իշխանութիւնները հարկաւ կը մտածէին որ տեղույս հայ մամուլին ուսերուն վրայ ալ պարտականութիւն մը կը դրուէր: Ինչպէս ըսած ես հարցումիդ մէջ, ասիկա հայ մամուլը կը դնէր երկու կրակի միջեւ: Իշխանութիւնները մեզ մէ ալ բան եր մը կը սպասէին: Զեմուզեր մտնել մանրամասնութիւններու մէջ, բայց ստոյգ էր որ պետք է զգացնէիք թէ մե՛նք ալ դժգոհ էինք նմանօրինակ սպաննութիւններէ, քանի որ մեր համայնքը, որպէս թուրքիոյ քաղաքացի, միշտ ունէր պարկեշտ ու իր քաղաքացիութեան նկատմամբ հաւատարիմ կեցուածք: Պատրիարքարանն ալ, մեզի նման, կ'ապրէր ծանր անհանգստութիւն: Օրուան Պատրիարքը՝ երջանկայիշատակ Շնորհք արքեպիսկոպոս, քանի-քանի անգամներ ապրեցաւ դժուար ու ծանր օրեր: Ասիկա տեւեց մինչեւ որ այդ շրջանն ալ փակուեցաւ ու վերջ տրուեցաւ մահափորձերու: Պատմութիւնը լեցուն է գրուած կամ բնաւ չգրուած դրուագներով: Միայն կ'ուզեմ յիշել պատահար մը, որ բարոյական շատ բարձր նշանակութիւն ունի: Երբ արտասահմանի մէջ մահափորձի ենթարկուեցաւ թուրքիոյ դիւանագետներէն մէկը, անոր որդին կապ հաստատեց ինծի հետ եւ բարեկամական մերձեցումով ուզեց անելի շատ բան սորվիլ անցեալի մէջ հայերու ու թուրքերու միջեւ պատահածներու մասին: Ազնիւ տղայ էր, քաղաքավար էր, որքան ալ տխուր ըլլար: Մենք միջեւ այսօր կը շարունակենք բարեկամ մնալ իրարու հետ:

Ահաւասիկ այսպիսի մթնոլորտի մը մէջ ապրեցանք: Զարկաւ ամեն մահափորձէ վերջ մենք ալ խմբագրական կարճ յօդուածներով կը զգացնէինք մեր անհանգստութիւնը: Զիմա կ'ուզեմ մոռնալ այդ շրջանը, բայց կարելի՞ է: Միայն թէ այսօր ալ փառք կու տամ որ այդ նուրբ ու շատ պայթուցիկ շրջանը անցուցինք առանց համայնքէն ներս լուրջ միջադէպեր ապրելու:

(շար. 2)

## ԹԵՒՎԻՈՐ...

Սկիզբ՝ էջ 11

ներ չունի իրեն զինակից ու գաղափարակից<sup>2</sup>:

**\*\*\* Զաւուրեան նոխագ**

Նոխագ-ը այժմն արուն է, որ ընդհանրապէս հօտին առջեւէն կ'երթայ ու կ'առաջնորդէ գայն: Իսկ «քաւութեան նոխագ» դարձուածքը

ունի պատմական խոր անցեալ մը, որ կ'առնչուի հրեայ ժողովուրդին<sup>3</sup>:

Տարին անգամ մը հրեաները իրենց գործած մեղքերը կ'արձանագրէին մագաղաթի մը վրայ, գայն կը կապէին նոխագի մը վիզէն ու նոխագը որոշ արարողութեամբ կ'արձակէին դեպի անապատին խորերը, ուր այդ անասունը անօթի-ծարաւ նքթելով կը մահանար: Իրենց այս արարքով հրեաները կը հաւատային, որ հաւաքաբար քաւած կ'ըլլային իրենց մեղքերը. եւ ուրեմն գոհ գացող անասունը՝ **քաւութեան նոխագը**, իր կեանքի գնով կ'ապահովէր հրեաներուն մեղքերու թողութիւնը: Նոխագը, սակայն, այլապէս եւս կը ծառայէր հրեայ ժողովուրդի մեղքերու թողութեան, քանի որ Երուսաղէմի տաճարի սեղանին վրայ գոհուող մատաղցու այլազան անասուններուն մէջ յատուկ նախասիրութիւն կը տրուէր անոր:

«Զաւուրեան նոխագ» դարձուածքը, ուրեմն, կրնայ խորհրդանշել որեւէ անհատ, հաւաքականութիւն, կազմակերպութիւն, որ կը ծառայէ ուրիշներու յանցանքի քաւութեան կամ զանազան մթին հարցերու ու հաշիւներու լուծումին, որուն մէջ ինք որեւէ շահ չունի: Զաւուրեան մեծագոյն նոխագը, այսպէս ըսած, Աստուածորդին ի՞նքն է, որ «վասն մեր՝ մարդկան... չարչարեալ, խաչեալ, թաղեալ...»:

Իր յուշերուն մէջ անցած դարու անգլիացի մեծ դիւանագետ մը՝ Լոյդ ճորճը, կը պատմէ քաւութեան այլ նոխագի մը մասին, որ դարձաւ Զայաստանը Պերլինի վեհաժողովին, ուր գանազան պետութիւններ, յատկապէս Թուրքիան, իրենց հարցերը լուծեցին ի հաշիւ Զայակական հարցին ու բարենորոգութեանց: Իրենց շիլ հաշիւներով ու շահերով տարուած պետութիւններու շարքին առաջին տեղը կը գրաւէր Անգլիան, որ իր «մատուցած ծառայութեան» փոխարէն Կիպրոսը նուէր ստացաւ սուլթան Զամիտէն:

### \*\*\* Զրեական յանցանք

«Զրեական» ածականին արմատն է **զրէ**, որ է **քուլայ**: Սեմական բառ մըն է, որ կը նշանակէ «հալոց, բովք, մետաղ հալեցնելու վառարան» (Արմ.):

Անցեալին հանքավայրերուն կից կը հաստատուէին նաեւ քուրան, տեղույն վրայ հալեցնելու ու մշակելու համար ստացուած մետաղը: Այստեղ կը տիրէին կենցաղային շատ դաժան պայմաններ, որոնց ամենէն անտանելին անշուշտ բարձր ջերմաստիճանն էր, ուստի գրեթէ անկարելի կ'ըլլար հանքերու կամ անոնց քուրաններուն մէջ կամովին ծառայող բանուորներ գտնել: Եւ որովհետեւ տնտեսական շատ մեծ արժեք ունէին հանքերը, պետութիւններ սկսան դիմել բռնի աշխատողներու, որոնք գերիներն ու ծանր յանցագործներն էին:

Ահա այստեղէն է, որ հետզհետէ յառաջացան դարձուածքային գանազան բառակապակցութիւններ, ինչպէս՝ քրեական յանցանք, **քրեական պատիժ**, **քրեական յանցագործ**, **քրեական պատժապի** եւ այլն:

Իսկ ամբողջ հանքավայրը կը կոչուէր «քրեական մետաղ», երբեմն ալ միայն՝ «մետաղ», որ կ'ընկալուէր իբրեւ պատժավայր, տաժանավայր: Այս իմաստով ալ մեր մատենագրութեան մէջ կը գտնենք այսպիսի արտայայտութիւններ. «Արտասահման եղէն ի **մետաղ** մշտնջենաւորս» («Աքսորուեցան մշտնջենական հանքավայրերը»): «Դարձցին ամենայն դատապարտեալք որ ի քրեական **մետաղ** իցեն» (Թուրք դաշանց. «Թող վերադառնան այն բոլոր դատապարտեալները, որոնք քրեական հանքավայրերը կը գտնուին»): «Դարձոյց ամենայն հարս սուրբս, որք յաղագս ուղղափառութեան արտասահմանեալ էին ի **մետաղ**» (Խորենացի. «Վերադարձուց այն բոլոր սուրբ հայրերը, որոնք ուղղափառութեան պատճառով քսորուած էին հանքավայրերը»):

Ներկայիս **քրեական** եզրը (քրեական յանցանք, քրեական յանցագործ) այլեւս հանքին ու քուրային չ'առնչուի, այլ կը բնորոշէ յանցագործութեան այն տեսակը, որ բանտարկութեամբ պատժելի է միայն եւ որմէ կարելի չէ խուսափիլ տուգանքով կամ այլ պատիժով:

Դարձուածքներու ժուժկալ գործածութիւնը, ինչպէս ըսինք, գեղեցիկ, պատկերաւոր ու տպաւորիչ կը դարձնէ մեր խօսքը. անոնց պատեհ ու տեղին մէջ բերումը համ ու հոտ կու տայ գրողներուն, պայմանաւ որ մէկ էջը յօդուածի մը մէջ չորս դարձուածք չգործածենք, ինչ որ չարաշահութեան ու ճապարհու մի կը տանի մեր ոճը: Պետք է մասնաւորաբար խուսափիլ բռնագոտութենէ. պետք չէ խօսողը կամ գրողը ի՞նք փնտռէ դարձուածքը, այլ դարձուածքը պետք է դառնայ գրողին ետեւէն: Եւ վերջապէս պարտիքը յարգել տուեալ դարձուածքին տուն տուող պատմական պահին ու հոգեբանութեան շրջագիծը՝ փորձելով որոշ հանգիստութիւն դնել այդ շրջագիծին ու մեր խօսքին միջեւ: Այսպէս, օրինակի համար, թաղապետական աթոռ հետապնդողի մը բերնին մէջ կարելի չէ դնել Կեսարի՝ «վիճակը ձգուած է» խօսքը, ոչ ալ առօրեայ աննշան տաղտուկները կարելի է «դամոկլեսեան սուր» անուանել: Ժողովին կամ դասապահուն ուշացած տղեկը թոյլատրելի չէ «վերջին մոհիկանը» կոչել: Նման անտեղի կամ անհամապատասխան գործածութիւններ ոչ միայն չեն նպաստէր մեր լեզուի ու ոճի գեղեցկութեան, այլեւ ծիծաղելի ու գաւեշտական կը դարձնեն գանոնք. անոնց հեղինակը նմանապէս:

(վերջ)

<sup>2</sup>Ա. Շառուկեան, ակնարկելով իր ամերիկաբնակ մէկ բարեկամին՝ Կ. Ջորջաբեանի օտար լեզուներու դեմ մղած պայքարին՝ ի պաշտպանութիւն հայերէնի, կը գրէ. «Օտար լեզուի դեմ ընդվզող վերջին մոհիկանը, որ աւա՛ղ, միևնա՛կ է եւ միևնա՛կ պիտի մնայ» («Սփիռնի տասնամեակները», էջ 91):

<sup>3</sup>Խորբին մէջ «քաւութեան նոխագ»-ի անանդոյթը պատմականօրէն գոյութիւն ունեցած է այլ ժողովուրդներու բարբերուն մէջ եւս, մասնաւորաբար յոյներու, սակայն անոր աստուածաշնչական վկայութիւնը պատճառ դարձած է, որ ան ձեւով մը իւրացուի ու վերագրուի մասնաւորաբար հրեայ ժողովուրդին:



Ռաֆֆի Սիլահեան

## ՀԱՅԿԱԿԱՆ

### Աշխարհի Առաջնության Գաւաթը Պիտի Հասնի Հայաստան

Ֆութպոլ քաջալերողները 7 Փետրուարին կարելիութիւն պիտի ունենան Հայաստանի մէջ տեսնելու 2018-ի աշխարհի ախոյեանութեան գաւաթը, որմէ ետք գաւաթը պիտի շարունակէ իր ուղեւորութիւնը: Աշխարհի 2006-ի առաջնութենէն ի վեր Մոստիալի գաւաթը սկսած է շրջիլ աշխարհի տարբեր երկիրներ: 2018-ի ախոյեանութեան բաժակի ուղեւորութեան մեկնարկը տրուած է 7 Սեպտեմբեր 2017-ին: 21-րդ աշխարհի ախոյեանութեան բացման արարողութիւնը պիտի կատարուի այս տարուան 14 Յունիսին:



### Հայ Գեղասահորդները Կը Պատրաստուին Եւրոպայի Առաջնութեան



Հայաստանի Գեղասահի Դաշնակցութեան նախագահ Մելանիա Ստեփանեան ՅԱՕԿ լրատուականի հետ զրոյցի ընթացքին յայտնեց, թէ 15-էն 21 Յունուարին, Մոսկուայի մէջ տեղի պիտի ունենայ գեղասահի Եւրոպայի առաջնութիւնը, որուն ընթացքին Հայաստան պիտի ներկայացնեն

Սլաւիկ Հայրապետեան եւ Թինա Կարապետեան: Անաստասիա Գալուստեանի մասնակցութիւնը թեական է:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### Ռոնալտու+Նիւթական Մեծ Գումար մը՝ Փոխան Նէյմարի

Սպանական մարզական լուրերը վերջին շաբթուան ընթացքին իրենց գլխաւոր նիւթը դարձուցին Զրիստիանո Ռոնալտուի փոխադրութիւնը դէպի Ֆրանսական Փարիզ Սան Ճերման ակումբ: Ըստ հաղորդուած լուրերուն, սպանական ակումբի պատասխանատուները համաձայնած են Զրիստիանո Ռոնալտու փոխարինել պրագիցի Նէյմարի հետ եւ մեծ գումար մը յատկացնել սոյն փոխադրութիւնը յաջողեցնելու համար: Չոյզ ակումբներուն ներկայացուցիչները փակ սենեակներու մէջ արդէն սկսած են բանակցութիւններ վարել: Այս փոխադրութիւնը մեծ հաւանականութեամբ պիտի իրականանայ համաշխարհային ֆութպոլի մրցումներէն ետք:



լուն արդիւնքներ արձանագրած է նաեւ Եւրոպայի ֆութպոլի ախոյեանական մրցումներուն՝ ախոյեանութեան արժանանալով 2016-ին, մինչդէռ 2004-ին ան գրաւած էր երկրորդ դիրքը: Պատմութեան ընթացքին ունեցած է բարձր մակարդակով խաղողներ, ինչպէս՝ Լուիս Ֆիլո, Ռոյ Քոսթա,



Նուսո Կոմիչ, Նաուլէթթա եւ Ֆերնանտո Քոթո: Ներկայիս, հաւաքականի խաղողները համաշխարհային մակարդակով լաւագոյն մարզիկներ կը համարուին: Անոնցմէ մէկն է Զրիստիանո Ռոնալտու: Խումբի այժմու մարզիչն է Ֆերնանտո Սանթոս, իսկ խումբի պաշտօնական տարագին գոյնն է կարմիրը:

### ՖԻՖԱ-ի 2018 Համաշխարհային Մրցումներուն Պիտի Իրագործուի «Ռիփլէյ»-ի Դրութիւնը

Ըստ «ԱՍ» օրաթերթին, Ռուսիա 2018-ի համաշխարհային ֆութպոլի մրցումներու ընթացքին ՖԻՖԱ-ն յայտարարեց, որ եթէ իրաւարարներուն կողմէ կասկածելի որեւէ հարց գոյութիւն ունենայ, կազմակերպութիւնը համաձայն է, որ մրցումներուն ընթացքին «ռիփլէյ»-ի դրութիւնը կիրարկուի: ՖԻՖԱ-ի թեքնիք յանձնախումբը այս հարցին շուրջ իր վերջնական որոշումը պիտի տայ 22 Յունուարին՝ իր պաշտօնական նիստին ընթացքին: Դրական որոշումի մը յանգելու պարագային, ՖԻՖԱ-ն պետք է կազմէ համակարգին հսկող իրաւարարներուն ցանկը: Այս համակարգը յաջողութեամբ կիրարկուած է 2017-ի միջցամաքամասային բաժակի մրցաշարքին ընթացքին, ինչպէս նաեւ 2017-ի աշխարհի ակումբներու ախոյեանութեան ընթացքին: Անկէկա կը կիրարկուի նաեւ Գերմանիոյ եւ Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան մրցումներուն:



### Կոփի Պրայընթ Պատկերասփիւռային Կայանի Հաղորդավար Պիտի Դառնայ



Ըստ «Bleacher Report»-ի, ամերիկեան NBA-ի երեք արհեստավարժ պասքէթպոլիստ Կոփի Պրայընթ յառաջիկայ օրերուն ESPN պատկերասփիւռի կայանին վերլուծական հաղորդման մը հաղորդավարը պիտի դառնայ: Ան իր առաջին ներկայացումը պիտի կատարէ Մարտին: Կայանը կը վըստահեցնէ, որ Պրայընթ բացառիկ վերլուծումներ պիտի կատարէ:

### Պարսելոնա Ներկայացուց Իր Նոր Խաղողը՝ Եարի Մենան

Շուրջ ինը հազար համակիրի ներկայութեամբ, Սպանիոյ ախոյեանութեան առաջին դիրքը գրաւող Պարսելոնան Զոթինիոյի պայմանագիրը



ամուսնը կրող տարագը՝ առանց թիւի. ան մեծ հաւանականութեամբ պիտի կրէ 14 թուակիր տարագը՝ փոխարինելով արժանթինցի Մասքերանոյը:

Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
22/1	23/1	24/1	25/1	26/1	27/1	28/1
3° 13°	4° 11°	4° 11°	4° 11°	2° 11°	2° 10°	2° 11°

## ԳԱՄԻՇՆԻ ՄԵՋ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱԿ ՀՅԳ 127-ԱՄԵԱԿԸ

Երկուշաբթի, 25 Դեկտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Գամիշլիի «Կիւլպենկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ՀՀ Դաշնակցութեան 127-ամեակի տօնակատարութիւնը, ներկայութեամբ Ճեգիրիի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Հոգ2.



Տ. Ռուբեն Աբը. Նալպաստեանի, Պատկան Մարմնին, ազգային եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներուն եւ բազմաթիւ հրաւիրեալներու:



Հանդիսավարներ Ռիթա Տէր Սարգիսեան-Կարապետեան եւ Խաչիկ Ղուկասեան բացումը յայտարարելով ներկաները հրաւիրեցին մէկ



վայրկեան յոտնկայս յարգելու Սուրիոյ եւ ՀՀ Նահատակներուն յիշատակը: Ապա ՀՀԴ քայլերգին երգեցողութեամբ յայտագիրը ընթացք առաւ: Բացման խօսք արտասանեց

Խաչիկ Մելքոնեան, որ անդրադարձաւ Դաշնակցութեան գաղափարաբանութեան՝ դիտել տալով, որ «Դաշ-



նակցութեան երկարակեցութեան գաղտնիքը իր գաղափարախօսութեան ու աշխարհայեացքին մէջ է: Անոնք յառաջացած են հայ ժողովուրդին պատմութենէն եւ գործի վերած-



ուած են կուսակցութեան ողջ պատմութեան ընթացքին՝ հայրենիքին ու հայ ժողովուրդին բարօրութեան ի



խնդիր»:  
Գեղարուեստական յայտագիրը կ'ընդգրկէր ժագ Յակոբեանի բա-

նաստեղծութիւններէն համադրուած ընտրանի մը, որ տպաւորիչ առողա- նութեամբ ասմունքեց Մեղրի Ասիլ- տեան- Ղուկասեան:

Ատուր Աղամեան հանդիսական- ները խանդավառեց ազգային- յեղա-



ւորական երգերով, երգեհոնի ընկերակցութեամբ Զրիստափոր Միքայելեանի:

Օրուան խորհուրդը տուաւ Գրիգոր Թովմասեան: Ան յայտնեց, թէ «Դաշնակցութիւնը կազմուեցաւ հայ կեանքի, ընկերային կեանքի, յեղա-



ւորական կեանքի մէջ... Դաշնակցութիւնը ամբողջ շրջանի մը պատմութիւնն է, վաստակ մըն է: Այդ վաստակը կերտուեցաւ փոյլ առ փոյլ, քայլ առ քայլ եւ այդ պատմակերտումի տողորումին մէջ սերունդներ ամբողջ իրենց կեանքը գոհեցին անըսպար: Ոմանք իրենց մտքի լոյսը տուին, ուրիշներ արիւնը գոհաբերեցին եւ որքան կը բնորոշենք Դաշնակ-

ցութիւնը, այնքան անբնորոշելի կը մնայ ան. ապրող, զարգացող ու զարգացնող երեւոյթ մը... Դաշնակցութիւնը հերոսներու կերտիչն է, գաղափարական խտեւալի մը ջահակիրը, հայ ժողովուրդին ծառան, միաժամանակ անոր կամքի, մտքի, հոգիի յեղափոխութիւնն է»:

Բանախօսութենէն ետք տեղի ունեցաւ Դաշնակցութեան 127-ամեակին նուիրուած կարկանդակին հատումը: Կարկանդակը նուիրուած էր



հանգուցեալ ընկերուհի Արաքսի Արմենակեանի յիշատակին, որ որպէս հայ լեզուի ուսուցչուհի եւ ազգային-յեղափոխական երգեր ուսուցանող, միեւնոյն ատեն միութեանական անսակարկ ծառայող, տարիներու իր աշխատանքով եւ աշխոյժ գործունեութեամբ նուիրեալ



հայուհիի տիպարն էր Գամիշլիի մէջ:

Հանդիսութեան աւարտին հոգ2. հայր սուրբը իր հայրական օրինութիւններն ու շնորհաւորական խօսքը արտասանեց, որմէ ետք «Պահպանիչ» աղօթքով եւ «Յառաջ Նահատակ» քայլերգով տօնակատարութիւնը հասաւ իր աւարտին:

**Բժշկի. Սարի Մելքոն**

# Sbidag RESTAURANT

# New Sbidag RESTAURANT

Արագ Մատուցան Ժողովրդային Տես խանութակալութիւնն ու Տնօրէնութիւնը Իրեն յարգող յաջանորոշներուն ռօրնախօսեամբ ԿԸ ներկայնշան 2018-ի ԱՄՆԱԲԱՆ ԱՆՈՒՆԱԿԱԸ՝ ՓԻՇՅԱՅԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՆԱԿԱՆՐՈՒ յԱՏՈՒԹԻՒՄԸ, յԱՏՅԵԼԻ ԳԻՆԵՐՈՒ:

Հրահրուած էք ՎՅՆԵԼԵԼԻՄ յԵՐ ՃԱՇԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՀՐԱՅՉՈՒՐ ՀԱՄԵՐ ՓԻՇՅԱՆ:

Peperoni

Jambone

Smoked Margorita